

ԵՐԱԺԻՇՏ



Լույս է տեսել ISSN 1829-0469 թղթային տարբերակը 2005թ. դեկտեմբերի 25-ից (229) #1 հունվար 2025

20-ԱՄՅԱ «ԵՐԱԺԻՇՏ»
ՀՈՐԵԼՅԱՆՍԿԱՆ
ԱՄՍԱԹԵՐԹԸ

ԵՐԱԺԻՇՏ

ԵՐԵՎԱՆԻ ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՎԱՆ ԳԵՏԱԿԱՆ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱՅԻ ԱՄՍԱԹԵՐԹ
Լույս է տեսնում 2005թ. դեկտեմբերից #1 դեկտեմբեր 2005 գինը՝ 100 դրամ

ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՆՔ

«ԵՊԿ
ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅԱՆ»
21-
«ԵՐԱԺՇՏԱԿԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆ»
ԱՄՍԱԳՐԻ 27-
ԵՎ
«ԵՐԱԺԻՇՏ»
ԱՄՍԱԹԵՐԹԻ
20-ԱՄՅԱԿՆԵՐԸ

«Ճամփա,
որ գեղջուկի հերկած ակունքից,
հինավուրց վանքերի որմերից,
մագաղաթների գունատ թերթից սկսվեց...»
ԿՈՄԻՏԱՍ


Պարոն Սարաջյան, այսօր, Չեզ եմ դիմում հաճելի աղիթով: Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան մշտապես արժանացել է Հանրապետության մամուլի բարձր գնահատականին ու դրվատանքին: Ձանգվածային տեղեկատվության միջոցներից մեկը՝ մամուլը մշտապես ղեկավարում է հասարակական կյանքում: 1998թ. իրականացավ այնպիսի մի երևույթի ծնունդ, որին երաժշտասեր հանրությունը սպասել էր շուրջ 70 տարի՝ հրատարակվում է «Երաժշտական Հայաստան» ամսագիրը: Չեզ դիմելու ուրախալի 2-րդ շարժառիթը կոնսերվատորիայի թերթի լույսընծայում է: Ի՞նչ կարևորություն ունի այս թերթը և ի՞նչ սպասելիքներ ունենք:

Շատ մեծ նշանակություն ունի: Թերթ ունենալու անհրաժեշտությունը վաղուց էր զգացվում, սակայն ինչ-ինչ պատճառներով հետաձգվում էր տպագրությունը: Կոնսերվատորիայի ուսանողները մեկուսացված են միմյանցից, իսկ թերթը կօգնի նրանց մերձեցնելու և համախմբվելու: Կոնսերվատորիայի ներսում տեղի ունեցող յուրաքանչյուր նորություն, միանգամից մեծ հետաքրքրություն է առաջացնում, և եթե մենք կարողանանք այս թերթը դարձնել իրոք բովանդակալից, հետաքրքրական, ապա թերթի համայնքները խնդիր կհրավանան: Բացի այդ, ընթերցանությունն այսօր վտանգի տակ է, համակարգայնացումը հեռացնում է մարդկանց տպագիր խոսքից, հատկապես զրբից, որի հուզական ներգործությունը մեծ է:

Թեև որոշակի հստակեցված է թերթի գործառույթը, բայց և այնպես ինչպիսի՞նչ կցանկանաք տեսնել այն՝ հանրապետական, թե՛ զուտ մասնագիտական:

ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

Ինձ թվում է, որ այս թերթը պետք է լինի այն համալիրը, որում կշռափվեն և կարողանան հետ նորաստեղծ կապերով: Այսօր վերականգնել ենք ստեղծագործական կապերը Մոսկվայի կոնսերվատորիայի հետ: Գոկոսեմբեր ամիսը մշտապես զբաղվեց Մոսկվայի Հայկովսկու անվան կոնսերվատորիայի օնկոտոր, դաշնակահար Տիգրան Ալիխանյանի, մեկուսացված Ֆալուստիի դեկան Վլադիմիր Իվանովի և դաշնակահար Ալեքսանդր Սնդրյանի երևան այցով: Ի՞նչն էր այդ այցի նպատակը:



Այս եռյակի այցելությունը թեև կարճատև էր, ընդամենը երեք օր, սակայն այն ծառայեց իր նպատակին, նրանք մեծ հաջողությամբ անցկացրեցին վարպետության դասընթացներ: Եվ ուրախալից այն է, որ նրանք լավ տպավորություն ստացան մեր ուսանողների կատարումներից: Ընդհանրապես հանդիպումներն անցան ստեղծագործական ջերմ մթնոլորտում: Պայմանավորվեցինք, որ երևանի և Մոսկվայի կոնսերվատորիաների ստեղծագործական ամուր կապերը վերահաստատվեն: Գնեսիների անվան ակադեմիան երևանի կոնսերվատորիայի մի խումբ ուսանողների հրավիրեց Մոսկվա, հանդիպում-համերգներով:

Չեզ կարծիքով երևանի կոնսերվատորիայի ուսանողներն ունեն մասնագիտական այն պատշաճ մակարդակը, որ իրենց հայրենիքի պատիվը բարձր պահեն արտասահմանյան երկրներում:

Այո: Մենք ջանում ենք աշխատել կրթական ավանդույթների համակարգով, առաջնորդվելով նախնի հորիորային Միության ստեղծած դասավանդման չափանիշներով, անշուշտ ավելացնելով նորը առաջադիմականը:

Պոլ լինում եք տարբեր երկրների կոնսերվատորիաներում, դասավանդման ի՞նչ մեթոդներ կան, որոնք կցանկանայիք կիրառել մեզ մոտ:

Կոնսերվատորիան ավանդապաի բուն է, իհարկե զարգացում, առաջընթաց նկատելի են, ստեղծվում է նոր երաժշտություն, որին պետք է հետևենք, կատարենք: Փորձում ենք քայլել ժամանակին համընթաց, բայց գտնում ենք, որ կոնսերվատորիայի նման բուհում դասավանդվում են ավանդական դասընթացներ, որոնք անպայման պետք է մնան: Մեր դասավանդման ծրագրերում ավելացան մենջեմենթ, ինֆորմատիկա դասընթացները: Այսպիսի նորություններ ընդունում ենք, բայց հիմնականում մնում է անփոփոխ: Ուսման մակարդակն, անշուշտ, կատարյալ չէ, բայց ձգտում ենք հասնել կատարյալին:

Պարոն Սարաջյան, Քանի որ այս թերթի հրատարակման նախաձեռնողը դուք եք, ապա Չեզ է տրվում ողջույնի առաջին խոսքը:

Թերթին մաղթում են երկար կյանք և հաջողություններ: Գուտով են, որ այն պատվով կկատարի իր առաքելությունը: Հատուկ շնորհակալություն են հայտնում իմ գործընկերներին՝ «ԵՊԿ հրատարակչությանը», որոնք աշխատում են մեծ ջանասիրությամբ: Եվ գիտեմ, որ թեև աշխատատար, սակայն շնորհակալ աշխատանք են կատարում:

Բարի եղբ մեր թերթին: Ընդհանրապես, պարոն Սարաջյան հարգազույցի համար:

ԱՆԱԳ ԳԵՎՈՐԳՅԱՆ
«Երաժիշտ» ամսագրի
գլխ. խմբագիր,
ԵՊԿ դասախոս

«Երաժիշտ» ամսագրերի կարեվորությունն արժեվորած անվանի երաժիշտների մաղթանքները

2

«ԵՐԱԺԻՇՏ» ԱՄՍԱԹԵՐԹԸ 20 ՏԱՐԵԿԱՆ Է

4

ՄՈՒՇԵՂ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ «ԿԵՍԳԱՐՅԱ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ»



Մուշեղ Հարությունյան

12

«ԵՊԿ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅԱՆ» ԱՎԱԳ ԿԱԶՄ անցյալի փարիսերի էջերից



Վալենտին Թովմասյան, Գրիգորյան Մկրտչյան (2008-ին ռուս տեքստերի խմբագիր), հեղինակ և Նյու-յորքբարձր բարերար, երաժշտագետ՝ Գրիգոր Փիտեմեան, Գոհար Շաղոյան, հեղինակ և հյուր երգչուհի, ԵՊԿ դոցենտ՝ Արմենուհի Սերյանյան, Առֆա Ազնուրյան, Գովհաննես Մուրադյան, «ԵՊԿ հրատարակչություն», 2008 թ.

«Երաժիշտ» ամսաթերթի կարեվորությունն արժեվորած անվանի երաժիշտների մաղթանքները



Ալինա Փախլանյան (1998-ից «Երաժշտական Հայաստան» ամսագրի խմբագրական խորհրդի անդամ), Էդվարդ Սիրոզյան (1998-ից «Երաժշտական Հայաստան» ամսագրի խմբագրական խորհրդի անդամ մինչև կյանքից հեռանալը՝ 2012), Տ. Նավասարդ արքեպս. Կճոյան, Սերգեյ Սարաջյան (ԵՊԿ ռեկտոր, «ԵՊԿ հրատարակչության» նախագահ 2004-ից), Քրիստափոր Փախլանյան (հիմնադիր-դիզայներ), Տիրան Լօքմազյան (հյուր, հեղինակ, կոմիտասագետ, երգիչ, թուրքագետ), Արթուր Ավանեսով (2000-2006 թթ.՝ անգլ. թարգմանիչ, խմբագիր), Վահան Խաչատրյան (Հայաստանի հրատարակչների միջազգային ասոցիացիայի նախագահ այժմ՝ գործադիր տնօրեն), Վալենտին Թովմասյան (2001-2017 (մինչև կյանքից հեռանալը) թթ.՝ «Երաժշտական Հայաստան» ամսագրի պատասխանատու քարտուղար, 2005-2012 թթ., ԵՊԿ հրատ. բաժնի վարիչ), Իրինա Տիգրանովա (1996-ից ստեղծման ակունքներից խորհրդատու և 1998-ից «Երաժշտական Հայաստան» ամսագրի խմբագրական խորհրդի անդամ մինչև կյանքից հեռանալը՝ 2011), Գոհար Շագոյան (1996-ից հիմնադիր-գլխավոր խմբագիր, 2004-ից՝ «ԵՊԿ հրատարակչության» հիմնադիր-հրատարակիչ-տնօրեն, «Երաժիշտ» ամսաթերթի հիմնադիր-թողարկման պատասխանատու՝ 2005-ից), Սուսաննա Ղուկասյան (2005-2012 թթ., «ԵՊԿ հրատարակչության» համակարգչային օպերատոր), Զովհաննես Մուրադյան (2004-2018 թթ.՝ հայերեն տեքստերի խմբագիր, սրբագրիչ), Զրանտ Խաչիկյան (2006-2011 թթ.՝ անգլ. խմբագիր, ԵՊԿ դասախոս, երգիչ), Սոֆա Ազնուրյան (2000-ից առ այսօր՝ ռուս. տեքստերի խմբագիր, կոմպոզիտոր), Սարիամ Ասատրյան (նոտային տեքստերի խմբագիր 2006-2011 թթ.՝ ԵՊԿ ինֆորմատիկայի դասախոս), Նուրե Սամվելյան (2000-2012 թթ.՝ «ԵՊԿ հրատարակչության» դիզայներ, նաև Ազգային գրադարանի համակարգչային բաժնի վարիչ), Եվա Կոչիկյան (ԵՊԿ ռուս. լեզվի թարգմանիչ խմբագիր), «Երաժիշտ» ամսաթերթի գլխավոր խմբագիր, երաժշտագետ Աննա Գևորգյան, «Երաժիշտ» ամսաթերթի հիմնադրման առիթով օրհնությունը՝ Տ. Նավասարդ արքեպս. Կճոյանի, «ԵՊԿ հրատարակչություն», փետրվար, 2006 թ.

ԵՊԿ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ «ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ» ԱՄՍԱԳԻՐ «ԵՐԱԺԻՇՏ» ԱՄՍԱԹԵՐԹ

Միրելի կոմիտասականներ Ձեր ջանադիր ուժերով հաստատված «ԵՊԿ հրատարակչություն»-ը, «Երաժշտական Հայաստան» ամսագիրը և «Երաժիշտ» ամսաթերթը՝ որպես կոմիտաս Վարդապետի անունը արժանավայել կրող հաստատության խոստովներ, այսօր մեծ գործ են կատարում ազգային անարար մշակույթի լույսը փոխելու համար: Ներկայումս իրական է կեղծ արժեքների նորամուտը հոսանքի վրանգը, որը սպառնում է իր հորջանրի մեջ առնել ազգային ու ավանդական, խորքային երկրասարդության հոգևոր ուղին: Գուք, խոսքի ուժով, երաժշտական կրթության ու դաստիարակչության միջոցով գորակցում եք նրանց, հարստացնում ձեր ընթերցողների հոգեմարմինը աշխարհը: «Բարբառ փողեցէք ի սիրտ մղչկեայ նոր աղաղակի» (Խոսք հնչեցրեք քաղնապած սրբերի համար նոր կանչով): Նարեկա վանքի ճգնավորի սուրբ Գրիգոր Նարեկացու աղոթախոս փողեքին ակնաջալուր՝ նորովի հնչեցրեք ձեր խոսքը, հաստատարակչու նվաճեք ընթերցողների սրբերը: Ջերմագին սիրով և օրհնությամբ՝

Տ. ՆԱՎԱՍԱՐԳ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԿՃՈՅԱՆ

14. մարտի 2006 թ.



«ԵՊԿ հրատարակչություն» շնորհանդեսը, ԵՊԿ 103 սենյակի տրամադրումը 2005-ից Ս. Ազնուրյան, Մ. Գևորգյան, Գ. Սմբատյան, Գ. Շագոյան, Ս. Սարաջյան, Ա. Ավանեսով, Ս. Ղուկասյան, Ա. Ավանեսով, Վ. Թովմասյան, Լ. Տոնոյան, Դ. Ղազարյան, Ի. Տիգրանովա, Ե. Կոչիկյան, Ս. Մուրադյան, Ե. Մեհրաբյան, Ժ. Զուրաբյան, Ն. Սամվելյան

Ո գ կ ո ռ ո ղ ի Ր ա դ ար ծ ու թ յ ու ն

Կոնսերվատորիայի ղեկավարության իրագործած արժեքավոր նախաձեռնությունների շարքում բուհական թերթի թողարկումը հատկապես ուրախալի իրադարձություն է: Կոնսերվատորիայի թերթի անհրաժեշտությունը վաղուց է հասունացել: այն կարող է անգնահատելի դեր խաղալ մեր բուհի կյանքում: Բուհական պարբերական մամուլը կարող է լայն հնարավորություններ ընձեռել: Ահա դրանցից մի քանիսը:

Կատեղծվի տեղեկատվական դաշտ, որը կնպաստի մեզ այդչափ չիտրիքող շփմանն ու միավորմանը: Թերթում «կինչեն» ուսանողության և դասախոսական կազմի խնդիրներն ու առաջարկները: մենք վկա կդառնանք կոնսերվատորիայի ղեկավարության հետ հետաքրքիր, իսկ երբեմն էլ հուզիչ երկխոսությունների:

Թերթում կուսաբանվեն բուհական կյանքի հատկանշական իրադարձությունները, մասնավորապես բոլոր բաժինների ուսանողների ստեղծագործական նվաճումները: Կքննարկվեն ռեկտորատի, ֆակուլտետների, ամբիոնների կազմակերպած միջոցառումները, դասարանական համերգներն ու մենահամերգները, կոնֆերանսները և այլն: Տեղ կգտնեն նաև ստեղծագործական խնդիրներ, ինչպես և ուսուցման հարցերին վերաբերող արդյունավետ քննարկումներ:

Ուշադրության կենտրոնում, անկասկած, կլինի ամենարդիական թեման՝ մեր հասարակական կյանքը:

Պակաս կարևոր չէ նաև մեկ այլ բան: Թերթը կդառնա կարծես կոնսերվատորիայի կյանքի տարեգրությունը, դրա ընդհանրացված պատմությունը: Հատկապես, եթե դրանում տեղ կհատկացվի հիմնական իրադարձությունները լուսաբանող պարբերական լրատվությանը: Նշենք նաև, որ անդրադարձնելով և քննադատաբար վերախմաստավորելով կոնսերվատորիայի կյանքը, թերթն այդքանով կազմակերպելու է այն:

Ու ևս մի կարևոր հանգամանք: Մեր բուհական մամուլը հնարավորություն կստեղծի արտասահմանյան կոնսերվատորիաների հետ փոխադարձ շփումների, տեղեկատվության փոխանակման համար, կդառնա ստեղծագործական փորձի փոխանակման հիմք:

Ամեն ինչ թվարկելն անհնար է, շատ բան կգտնվի հետագայում:

Շնորհավորենք իրար, այս իրաշալի իրադարձության կապակցությամբ:

ՎԻԼԼԻ ՍԱՐԳՍՅԱՆ
Դաշնամուրային ֆակուլտետի պրոֆեսոր

Երևանի կոմիտասի անվան Պեդական կոնսերվատորիա



Սոնա Զովհաննիսյան

№ /

28.01.2024

Շնորհավորում ենք Երևանի կոմիտասի անվ. պետ. կոնսերվատորիային, «Երաժշտական Հայաստան» ամսագրի և «Երաժիշտ» թերթի անձնակազմին, հանձինս հրատարակչության հիմնադիր և գլխավոր խմբագիր՝ Գոհար Շագոյանի: Շնորհավորում ենք կոնսերվատորիայի գիտական մասով պրոռեկտոր Շովինար Մովսիսյանին ևս, մեր դժվարին ժամանակներում հրատարակչության գործունեության պահպանման, ընդհատված ձեռնարկների վերականգնման և 20-ամյա գործունեության կապակցությամբ:

Անչափ կարևոր էր պահպանել ու զարգացնել երաժշտամշակութային միակ մասնագիտական մամուլն անգամ ներկայիս՝ ամենաբարդ ժամանակահատվածում, ինչը պատվով իրականացրել են մեր պարբերականի պատասխանատուները, որի առաքելությունը ժամանակի երաժշտագիտական մտքի և երաժշտական իրադարձություններով հարուստ գործունեության վավերագրության փոխանցումն է ապագային:

Ցանկանում ենք, որ այս անգին առաքելությունը երբեք չթեկանվի՝ դառնալով է՛լ ավելի բովանդակալի, առաջադիմական, գրավիչ, արտահայտելով հայաստանյան հարուստ ու բազմերանգ երաժշտական ներկայակալը:

Ցանկանում ենք, որ փետրենք ու դժվարությամբ ձեռք բերենք ցանկալի ամսագրի յուրաքանչյուր համար:

Ցանկանում ենք, որ հրատարակչության աշխատանքային դիրքն անգամեն արագանա, հովանավորչական ներդրումները կրկնապատկվեն և մենք մեր պարբերականների միջոցով տեղեկանանք ոչ միայն անցած, այլև գալիք իրադարձությունների մասին:

Ցանկանում ենք առաջընթաց և հարստև գործունեություն:

ԵՊԿ ռեկտոր, պրոֆեսոր՝



ՄԱ Ա ՀՈՎԱՆՆԻՍՅԱՆ

Մարկ Գրիգորյանի փող, 2, Երևան 0001, 22
+374 10 58 11 64
ykcsc@conservatory.am

www.conservatory.am

«Երաժիշտ» ամսաթերթի կարեվորությունն արժեվորած անվանի երաժիշտների մաղթանքները

Ուրախալի երևույթ է: Կարևոր է՝ թե ինչպիսին կլինի այն և որքանով կծառայի իր նպատակին, կոչմանը: Թերթը պետք է լինի անկախ, անաչառ, համարձակ, բայց այդ անկախությունը լինի խելամիտ, այլապես կունենա անցանկալի հետևանքներ: Թերթի խմբագրից շատ բան է կախված, նա իր գործի ընթացքում պետք է հենվի իրեն հավատացողների աջակցության վրա: Ես պատրաստ եմ օգտակար լինել, որքան ուժերս կներեն: Թերթին մաղթում եմ տոկունություն, համբերատարություն և սկզբունքայնություն: Բարի երթ...



Սոֆա Ազնաուրյան, Էդվարդ Միրզոյան, Գոհար Շագոյան, 2000 թ. «Երաժշտական Հայաստան» ամսագրի խմբագրությունը՝ ԵՊԿ 110 սեյնակում, 2000-2005 թթ.

ԵՐԱՐԴ ՄԻՐԶՈՅԱՆ
ԽՍՀՄ ժողովրդական արտիստ,
կոմպոզիտոր, պրոֆեսոր

Ճշմարիտ գնահատությունների պահանջն է

Մայրաքաղաքի երաժշտական հախուռն կյանքը և այն ներկայացնող երաժշտարվեստը վաղուց արդեն բազմակողմանի լուսաբանումների, քննարկումների, ճշմարիտ գնահատությունների պահանջն է թելադրել: Այդ անհրաժեշտ և կարևոր գործը որոշել է իրականացնել ասպարեզ եկող «Երաժիշտ» ամսաթերթը:

Խմբագրական այս անձնակազմը, որ երաժշտական աշխարհին ներկայացնում է «Երաժշտական Հայաստան» ամսագիրն ու տարբեր աշխատություններ, տարիների իր նվիրյալ, պատասխանատու և շահագրգիռ աշխատանքով իրավասու է ամսաթերթի հրատարակմանը:

Կարծում եմ թերթը կունենա ընթերցողների իր լայն շրջանակները, մանավանդ, եթե այն բովանդակի մաս լուրջ և պրոֆեսիոնալ քննադատական հոդվածներ, որի կարիքը



Մարտիրոս Սարյանի տուն-թանգարան, արվեստանոցում՝ Ա. Սարյանը կազմակերպել էր Ղ. Սարյանի ծննդյան 85-ամյակին նվիրված «Երաժշտական Հայաստան» ամսագրի շնորհանդեսը հենց նրա ծննդյան օրը՝ սեպտեմբերի 30-ին, 2005 թվականին, նաև համերգային ծրագիր կար, որտեղ հնչեցին անվանի երաժիշտների կատարմամբ սարյանական հանրաճանաչ երկերը: Ներկա էին հյուրեր ԱՄՄ-ից և Կանադայից և ամբողջ հրատարակչակազմը, ընտանիքը, ավարտվեց սարյանական հյուրասիրությամբ

շատ է անհրաժեշտ: Բարյացկամ, բանիմաց քննադատություն, որն օգտակար լինի և՛ ստեղծագործողին, և՛ կատարողին, և՛ համերգային կյանքի կազմակերպիչներին և՛ երաժշտասերին: Առողջ քննադատությունն ուղեցույց լինելու կարողություն ունի:

Ցանկանա՞նք «Երաժիշտ» պարբերաթերթին և այն հրատարակող անձնակազմին հաջողություններ, բարի երթ, իրենց գործի կարևորության խոր ըմբռնում և դրանից բխող հոգևոր բավարարության անհրաժեշտ զգացումները:

ԱՐԱՔՍԻ ՍԱՐՅԱՆ
Արվեստագիտության թեկնածու,
ԵՊԿ պրոֆեսոր
2005 թ.

Վերջին տարիների ընթացքում ակտիվացել է մայրաքաղաքի երաժշտական կյանքը և թելադրվում, պահանջվում է երաժշտական այնպիսի տեղեկատվությունը, որը ներկայացնի երաժշտական կյանքի անցողաբար: Իմ մեծ գոհունակությունը պետք է հայտնեն, որ «Երաժիշտ» թերթը ցույց է տալիս իր ակտիվ աշխատանքը և մեզ բոլորիս իրազեկ պահում. երաժշտական իրադարձություններին ու մեզ շրջապատող իրենց գործունեությամբ երաժշտությունը ներդրող անձանց կյանքին և գործունեությանը, դիմանկարների, անդրադառնում հրեյանական իրադարձություններին, հիշում անցյալի մարդկանց և բազում այլ հարցերի լուսաբանմանը: Շատ հա-

մերգներ, որ բաց ենթ թողնում, «Երաժիշտ» թերթը իրազեկ է պահում: Անհրաժեշտ է նշել նաև թերթում ակնառու աշխատակիցների ակտիվ, սրտացավ աշխատանքը և գործի նկատմամբ ունեցած պատասխանատվությունը: Նոր ընդգրկումներ և նոր հաջողություններ «Երաժիշտ» թերթին:

ԱՐԱՔՍԻ ՍԱՐՅԱՆ
ԳԳ Արվեստի վաստակավոր գործիչ,
արվեստագիտության թեկնածու,
Կոմիտասի անվ. ԵՊԿ երաժշտության պատմության
ամբիոնի վարիչ, պրոֆեսոր
2010 թ.

2005թ. Կոմիտասի անվ. ԵՊԿ ղեկավար, պրոֆեսոր Սերգեյ Գեորգի Սարաջյանը թերթ արեղծելու հրաշալի միջոց հիացավ: Այդ միջոցը կյանքի կոչեց «Երաժշտական Հայաստան» ամսագրի հիմնադիր և գլխավոր խմբագիր, նաև նուրբների և գրքերի հրատարակություն իրականացնող «ԵՊԿ հրատարակչության» հիմնադիր-ընթացի, երաժշտագետ Գոհար Կառլենի Շագոյանը: Եվ արդեն նույն փարվա դեկտեմբերին լույս տեսավ «Երաժիշտ» ամսաթերթի անդրադարձի համարը:



Գոհար Շագոյան, Իրինա Տիգրանովա
2009 թ.

Դժվար է գերազանցաբար ել այս երևույթի նշանակությունը: Առաջին անգամ, Հայաստանում, հնարավոր դարձավ շարունակաբար լույս տալ և բազմալի Երևանի, հանրապետության և երբեմն նաև մյուս ու հեռավոր արտերկրի երաժշտական կյանքը: Երաժշտագետներին, և որ հարկապես կարևոր է, երաժշտագետ-ուսանողներին ընթերցող փրկագրական ասպարեզ, որի շնորհիվ էլ՝ արդեն սովորելու փարիներին իրենց մասնագիտության ոչ միայն գիտական, այլև հասարակական կոչումը ճանաչելու և հաղորդակից լինելու հնարավորություն:

Սերունդների համար էլ ամսաթերթը կրառնա ժամանակակից երաժշտական կյանքի ինքնապիսի փրկագրություն՝ ինքնին որպես փաստիկ հարստություն, երբեմն էլ գուցե՝ ամիսաանք զգալու առիթ դառնալով: Խորին շնորհակալություն ենք հայտնում «Երաժիշտ» ամսաթերթի խմբագրական կազմին, շնորհակալություն ենք բոլորիս թերթի 5-ամյա հոբելյանի առթիվ և ցանկանում առավել լայն փարածում ու գրչի սրություն:

ԻՐԻՆԱ ԳԵՈՐԳԻ ՏԻԳՐԱՆՈՎԱ
արվեստագիտության
թեկնածու, ԵՊԿ պրոֆեսոր,
«ԵՊԿ հրատարակչության»
խորհրդի անդամ

Долгие годы создание такой органа печати было мечтой многих деятелей армянской музыкальной общественности, и сегодня мы имеем Издательство, которое получает высокую оценку своей деятельности не только в Армении, но и за ее пределами. Трудно переоценить значение музыкального печатного дела для развития армянской культуры. В «Издательстве ЕТК» создаются и печатаются различные образцы периодики: содержательный научно-теорети-



«ԵՊԿ հրատարակչության» բարեկամները, 2005 թ. Սևան (սիրիահայ), Ս. Ազնաուրյան, Ա. Ավանեսով, Շուշանիկ Ավոյան, Վ. Թովմասյան, Հայր Լեւոն Զեփեան, Գ. Շագոյան, Ա. Գևորգյան, Ա. Դուկասյան

ческий, критико-публицистический журнал «Музыкальная Армения», сборник научно-методических трудов, учебники, газета «Еражишт» («Музыкант») и многое другое. В их создании на протяжении ряда лет участвуют множество авторов, среди которых не только профессора и доктора наук, но и молодые преподаватели, аспиранты, порой даже студенты-магистранты. Ценно, что круг авторов нередко расширяется научными статьями иностранных ученых, наших соотечественников, живущих за рубежом. В изданиях находят отклик наиболее яркие, значимые события музыкально-общественной жизни республики. Благодаря этому, мы становимся свидетелями всех важных событий музыкальной жизни современного мира, знакомимся с жизнью и деятельностью выдающихся представителей музыкального искусства. Помимо активной научно-просветительской деятельности издательство стимулирует композиторское творчество, издавая произведения современных армянских композиторов. Существование такого издательства открывает творческие возможности для активной научной и публицистической деятельности музыкантов разных специальностей - пианистов и вокалистов, струнников и дирижеров, и, конечно же, музыковедов.

Сердечно поздравляем небольшой коллектив преданных и опытных музыкантов - редакторов Издательства и основателя, главного редактора, издателя, стоявшего у истоков создания, патриота, знатока своего дела Гоар Карленовну Шагоян.

ՄՍՈՒՆԻԿ ԱՐՄԵՆՈՎՆԱ ԱՍՅԱՆ
профессор, кандидат искусствоведения

Մամուլի դաշտում մասնագիտական աշխատանքը ոչ միայն մխիթարանք է, այլև՝ անհրաժեշտություն: Հանդգրված եմ, որ մեր թերթն անդրադառնալու է ոչ միայն կոնսերվատորիայի ներսում ընթացող անցողաբարին, այլ նաև նրանից դուրս, որովհետև, ի վերջո երաժշտական մշակութային կյանքում տեղի ունեցող ամեն ինչ իր արժանատի կապով է կոնսերվատորիայի հետ: Թեև նրա գործառույթը որոշված է՝ որպես կոնսերվատորիայի թերթ, բայց ցանկալի է, որ դառնա հանրապետության մշակութային մամուլի մի նոր օրինակ: Ուրախալի այն է, որ թերթում խոսվելու է բացառապես մասնագիտական արվեստի մասին: Թերթի շուրջ համախմբված է լինելու հայ երաժշտական կյանքում եմ այս թերթի լույս ընծայումը, ուրախ եմ մնամ նախածեռնության համար և պատակասլաց: Մաղթում եմ Ձեզ եռանդ ու կորով, ջանասիրություն, աշխատասիրություն:



Դովհաննես Մուրադյան, Գոհար Շագոյան, Մարգարիտա Կիրակոսյան («ԵՊԿ հրատարակչության» ռուսերեն տեքստերի խմբագիր-թարգմանիչ (2010-2012 թթ.), երաժշտագետ, դասավանդող)

պատրաստ եմ օգնել, ինչով կարող եմ: Ցանկալի է, որ թերթն անդրադառնա երաժշտության բոլոր ճյուղերին, լինի անաչառ, նպատակասլաց: Մաղթում եմ Ձեզ եռանդ ու կորով, ջանասիրություն, աշխատասիրություն:



Գոհար Շագոյան, Երանդ Երկանյան, Համբիկ Համբարյան, Սոֆա Ազնաուրյան, հյուր, հեղինակ՝ խմբավար, կոմպոզիտոր, ժան Ալմուխան (Քուենտա-Այրես, Արգենտինա), Դովհաննես Մուրադյան, 2011 թ.

Ձեր թերթը դառնա սպասված, սիրելի հազարավոր մարդկանց համար:

Բարի երթ...

ԹՈՒՄԱՍ ԴՈՐՈՅԱՆ
«Սայաթ-Նովա» անսամբլի գեղարվեստական ղեկավար,
կոնսերվատորիայի պրոֆեսոր,
բանասիրական գիտությունների թեկնածու, այժմ դոկտոր

«ԵՐԱԺԻՇՏ» ԱՄՍԱԹԵՐԹԸ 20 ՏԱՐԵԿԱՆ Է

1

Հանրապետությունում և համահայկական նշանակություն ունեցավ, 2005 թ. դեկտեմբերի 25-ին «Երաժիշտ» ամսաթերթի լույս ընծայումը, որի հիմնադրման ջատագովը էր ռեկտոր՝ Սերգեյ Սարգսյանը: Առաջին համարը շատ նշանակալից էր, երաժշտագիտական հրապարակախոսական միտքն էր տեղ գտնելու մասնագիտական մամուլում: Հիմնադրման և իր գոյության 20 տարիների ընթացքում թերթն ունեցել է զարգացում թե՛ նյութի բովանդակային առումով, թե՛ հեղինակների, որոնք ոչ միայն երաժշտագետներ են, կոմպոզիտորիայի պրոֆեսորներ, ուսանողներ, այլև գրականագետներ, բանասերներ, որոնց հոդվածներն առնչվում են երաժշտական արվեստի հետ:

«Երաժիշտ» ամսաթերթը գործում է «ԵՊԿ հատարակչության» խմբագրակազմի շնորհիվ, որը տարբեր տարիներին համալրվել է թարմ մտքի տեր երաժշտագետ-ըզջանավարտ երիտասարդ գլխավոր խմբագիրներով: Նրանք զուգահեռաբար սովորում էին և խմբագրական գործը, որովհետև այդ տարիների երաժշտագետներն արդեն չէին անցնում այդ դասընթացը (այն երկար տարիներ դասավանդել են երաժշտագետներին, հանձնառու ընդհատ Սերգեյի Իոնեսյանի, և գործնական դասընթացը վարում էր այժմ պրոֆեսոր՝ Նելլի Ավետիսյանը) և գլխավոր խմբագրի գործառույթները, որոնց միաժամանակ ուսուցանում էր ամսաթերթի հիմնադիր և թողարկման պատասխանատու, հրատարակիչ Գոհար Շազոյանը, ով հրատարակված հոդվածներով ընտրվում էր և հրավիրվում աշխատանքի: Ամսաթերթը 20-ամյա պատմության ընթացքում ունեցել է վեց գլխավոր խմբագիր:

«Երաժիշտ» ամսաթերթը ունեցել է շնորհաշատ, գրագետ, ԵՊԿ լավագույն ուսանողների ընտրանի. առաջին գլխավոր խմբագիրն էր երաժշտագետ ԵՊԿ դասախոս Աննա Գևորգյանը, որն իր երասախոսական գործունեությունն է շարունակում և կյանքի բերումով էլ՝ խմբագրական գործը Ստամբուլում, հայկական ընտանիք կազմելով և զույգ երեխաներ դաստիարակելով: Մշտապես ամսաթերթի գլխավոր խմբագիր ընտրել ենք ավանդաբար երիտասարդ երաժշտագետ ըզջանավարտներից և նրանք կատարելագործվելով մասնագիտական բարձրունքների հասնելով կրթվելով խմբագրությունում, այնուհետև իրենց ճանապարհն են հարթել: Այդպես գրեթե մեկ տարի աշխատելուց հետո Տաթև Ամիրջանը ուղևորվեց ԱՄՆ, որտեղ գործում է որպես դասախոս և կոմպոզիտոր: Նրան երկար տարիներ հաջող փոխարինեց երաժշտագետ գիտական պայծառ միտք ունեցող Համբարյանը, որն այժմ աշխատում է ԵՊԿ-ում որպես՝ նվագախմբային ֆակուլտետի տեսուչ, և երաժշտության պատմության ամբիոնի դասախոս: Նրան՝ 2012-ից 2014 թվականը, փոխարինեց երաժշտագետ՝ Շուշան Ավագյանը, որը պաշտպանեց իր ատենախոսությունը (ղեկավար արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Լիլիթ Վարդգեսի երնջակյան) և տեղափոխվեց այլ աշխատանքի: 2014-2016 թթ. և 2018-ից առ այսօր աշխատում է երաժշտագետ, կոմպոզիտոր, ՀՀ ԳԱԱ ԱԻ հայցորդ (ղեկավար՝ արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Կարինե Ազատի Ջաղացյան) Արմինե Աթոյանը, ով նաև դասավանդում է Արմավիրի արվեստի պետական թրվեջում, կապը պահպանելով նաև մարզային կրթական հաստատությունների հետ և նրանց առաջնադասումների մասին տեղեկացնում «Երաժիշտ» ամսաթերթի ընթերցողներին: Արմինե Աթոյանը հետևողական և ամսաթերթում ստեղծված ավանդույթները պահպանող և նոր ուղիներ փնտրող անհատականություն է: Նրան, այդ ընթացքում, մեկուկես տարի փոխարինեց երաժշտագետ, Ա. Բաբաջանյան երաժշտամանակավարժական թրվեջի դասախոս Մարգարիտա Կիրակոսյանը, ով 2010-2012 թթ. աշխատել է հրատարակչությունում որպես ռուսերեն տեքստերի խմբագիր-թարգմանիչ և եղել է հեղինակ գիտական հոդվածների:

Հիմնադիր դիզայները շնորհաշատ սիրահայ կիրենցե-տիկ, ՏՏ տեխնոլոգիաների բարձրակարգ մասնագետ Քրիստափոր Փախանյանն է, ով նաև հրատարակչության հիմնադիր դիզայներն է: Մակետավորող և էջադրող են եղել դիզայներներ՝ Նունե Սամվելյանը՝ կիրենցետիկ և ՀՀ ազգային գրադարանի ինֆոմատիկայի և հրապարակումների բաժնի վարիչը, այժմ՝ Գոհար Հովհաննիսյանն է, ով 2012-ից է աշխատում և մակետի 2-րդ նախագծի հեղինակն է, փոփոխունը կատարել է 2018-ից՝ մտահղացումը ռեկտոր, պրոֆեսոր Սոնա Հովհաննիսյանինն է:

Խմբագիրներ էին բազմամյա փորձառություն ունեցող Հայաստանում և Սփյուռքում ճանաչված մտավորականներ ռադիոլրագրողներ Հովհաննես Մուրադյանը 46 տարեկան ստաժով, որից երկար տարիներ եղել է ՀՀ ռադիոյի երաժշտական գլխավոր խմբագրության բաժնի վարիչ, ում ղեկավարությամբ հասունացել և գործել են խմբագիր և մեկնաբան Վալենտին Թովմասյանը (40 տարուց ավելի) և Գոհար Շազոյանը (1994-1999 թթ.): Իսկ 2004 թվականից Գ. Շազոյանը Հովհաննես Մուրադյանին հրավիրեց ԵՊԿ հրատարակչությունում աշխատանքի, և Վալենտին Թովմասյանին, ով արդեն 2001 թվականից էր հրավիրված, որպես պատասխանատու քարտուղար, որոշ ժամանակ անց նաև հրատարակչության բաժնի վարիչ: Երկուսն էլ ամսաթերթում խմբագիրներ էին և հեղինակներ: Վալենտին Թովմասյանը և Հով-

հաննես Մուրադյանը հանրապետությունում և Սփյուռքում ճանաչված մտավորական-խմբագիրներ էին, ցավոք անցյալով ենք հիշում, որովհետև 2017 թվականի դեկտեմբերի 27-ին, իր ծննդյան 80-ամյակից 10 օր անց Վ. Թովմասյանը հեռացավ կյանքից մինչև վերջին օրը աշխատելով և դասավանդելով կոմպոզիտորիայում: Պարոն Հովհաննեսը թոշակավորվեց 2017-ին (2019 թ. դեկտեմբերի 19-ին կնքեց իր մահկանացուն): Մինչև հիմա նրանց տեղը թափուր է և անկրկնելի: Բոլորս, ովքեր մնացել ենք երևելի հրատարակչակազմից (ընդամենը հաստիքային 3 աշխատակիցներով, 2012 թվականից կոմպոզիտոր եղան և շատ հոգեմաշ և անփառունակ կացություն է ստեղծվել հրատարակչությունում, ծանրաբեռնված աշխատանքով թե՛ ամսագրի, թե՛ ամսաթերթի, թե՛ ժողովածուի և թե՛ հրատարակչական գործում) օր չի լինում, որ չհիշենք պարոն Հովհաննեսի թևավոր խոսքերն օրինակ՝ «Այսպես էլ որ մնա, լավ է» այս խոսքերից բոլորը, հատկապես ռադիոյում «զժվում էին» ու անմիջապես պատասխանում. «Հովհաննես հերիք է ասես քանի գնում վատանում է»: Իսկ նա իմաստուն ժպտում էր ու լռում: Կամ շատ էր սիրում ռուսական ասացվածքն այլաբանորեն իր մեկնաբանությամբ, սակայն ամապայման թարգմանաբար էր ասում. «Վեկ ժրվի, վեկ ուչիս և էլ չենք շարունակում...», խորամանկորեն և չարածի ժպտով: Եվ մենք բոլորս միաբերան ժպտալով ասում էինք. «Այո, այո չենք շարունակում», նախ տակտի զգացողությունից, հետո՝ իմ (7 տարեկան) և պարոն Թովմասյանի (40-ից ավելի տարիների) բաժնի վարիչն է եղել ՀՀ ռադիոյում, հետո բոլորը նրանից անվերջ սովորում էին և, վերջապես, շատ հարգում էինք նրա անվերջություն, անմիջականությունը, առաքինությունը, մեծատառով հայ մարդու տեսակը: Մի անգամ Իրինա Տիգրանովան, ում հետ բարեկամներ էինք, և գրեթե, առանց այցելելու խմբագրություն տուն չէր գնում ասաց. «Ձեզ մոտ շատ լավ տղամարդիկ են աշխատում, այնպիսին չեն: Եվ համազաստ այցելում ենք»: Բոլորս հասկացանք անմիջապես թե



«ԵՐԱԺԻՇՏ» ամսաթերթի հիմնադրումը 2005-ի դեկտեմբերի 25-ին էր՝ 1-ին համարի հրատարակումը և «ԵՊԿ հրատարակչության» տրամադրվեց կոմպոզիտորիայի 103 սենյակը՝ «մեկ սենյականոց հրատարակչատունը»: Տեղի ունեցավ բազմամյա միջոցառումը Սրբազանի օրհնությանը (տես էջ 2.) 2006-ին



Дальнейшее обучение Софа Азнаурян продолжила в Ереванской государственной консерватории им.Комитаса в классе композиции проф. Г. И. Егиазаряна. Ее дипломной работой стала Поэма для сопрано и камерного оркестра на сл.К.Лепеджяна, исполненная Элладой Чахоян (дирижер Гевоорг Мурадян, фонд Радио РА).

Из характеристики проф.Егиазаряна: «Софа Азнаурян проявила себя как талантливый композитор, обладающий отличным вкусом и профессиональной подготовкой. За годы учебы она создала целый ряд серьезных произведений, в которых проявилось ее образное мышление, своя гармоническая и мелодическая сфера. Два ее произведения записаны на Радио Армении и вошли в фонд» (архив С.Азнаурян).

Еще в годы учебы С. Азнаурян удостоилась Диплома на Всесоюзном конкурсе молодых композиторов в Москве за вокальный цикл «Мгновение» на слова А. Мовсисян в исполнении Асмик Папян и автора. Камерность, стремление к психологизации образов, лаконизму формы во многом определило жанровую направленность сочинений Софы Азнаурян. С одной стороны, это пьесы для камерного орк-



Դավիթ Պողոսյան (2006-2009 թթ. նոտային խմբագիր), հեղինակ արվեստագիտության թեկնածու, պրոֆեսոր, ԵՊԿ կատարողական արվեստի տեսության, պատմության և դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հիմնադիր Շուշանիկ Ավոյան, Գոհար Շազոյան, Սոֆա Ազնաուրյան «ԵՊԿ հրատարակչություն» 2009 թ.

ինչ նկատի ուներ մեր սիրելին: Իսկ Աննա Բաբաջանը, որը բոլորիս դասավանդել էր և փոխադարձաբար միմյանց շատ սիրում էինք (առ այսօր պահպանում ենք կապը նրա ժառանգների հետ) հրատարակչությունն անվանում էր «Կոմպոզիտորիայի տաքուկ անկյունը»:

Կարճ ժամկետով, սակայն ակտիվ գործունեությամբ և քննդատական հոդվածներով աշխատակցել է երաժշտագետ Լիանա Եղիազարյանը, տակավին բակալավրական ուսումն ավարտելուն պես: 2018 թվականին, որպես խմբագիր և հեղինակ հանդես է եկել և խմբավոր Գրիգոր Հարությունյանը: 2005-2012 թթ. համակարգչային շարվածքի աշխատանքները կատարել է Սուսաննա Դուկասյանը: 2013 թվականի ապրիլից «Երաժիշտ» ամսաթերթը իրավունք է ստանում ըստ բնագրերի երկու լեզվով՝ հայերենով և ռուսերենով հրատարակելու, իհարկե գերակշռությունը՝ հայերենինն է: Ուսերեն լեզվով հոդվածների պատասխանատու խմբագիրն է՝ խմբագիր, կոմպոզիտոր Սոֆա Ազնաուրյանը, ով նաև իր հետաքրքիր հեղինակային հոդվածներով և հարցազրույցներով է ներկայանում ընթերցողին:

Софа Азнаурян родилась в Краснодаре (Россия), там же с отличием окончила теоретико-композиторское отделение Краснодарского музыкального училища им.Н.А.Римского-Корсакова. Ее авторский концерт талант рано привлек к себе внимание: первый авторский концерт прошел в 1975 году.



Հրատարակչության իյուր, հոդվածագիր Թիլիսիից՝ Սաման Վարսապետյան, Գոհար Շազոյան, Հովհաննես Մուրադյան, Տաթևիկ Ամիրջան, Վալենտին Թովմասյան, Սոֆա Ազնաուրյան, «ԵՊԿ հրատարակչություն» 2009 թ.

стра, Фортепианное трио, блестяще исполненное Армине Григорян, Карэном Шахгалдяном и Кареном Кочаряном на авторском вечере композитора, прошедшем в Доме-музее Арама Хачатуряна, Виолончельная соната, Фантазия для контрабаса и камерного оркестра, с другой – вокальные циклы (на сл.Комитаса, М.Саркисяна), подготовившие в определенной степени 3 камерные оперы, написанные в период с 2004 по 2007 год, исполненные на нескольких театральных и музыкальных международных фестивалях (2004 – Международный фестиваль, посвященный 75-летию А.Тертеряна; 2005 – Международный театральный фестиваль «Айфест»; 2006 – Международный «Рождественский фестиваль» (Краснодар, Россия); 2007 – Международный театральный фестиваль «Арммоно», 2009–РАМ им.Гнесиных (Москва, Россия), получившие широкий резонанс и оценку профессиональной критики – моноопера «Роковое пророчество» («Надежда», по новелле З.Гиппиус «Вымысел» 2004), камерная опера «Армения» (по стихам и прозе О. и Н. Манделштам, 2006), моноопера «Гамлет» (по У.Шекспиру, 2007), опера в 2-х действиях для детей «Приключения Чикарели» по одноименной повести Р. Марухяна (2014). Особое внимание уделяет композитор и сочинениям для детей: достаточно назвать «Цикл песен для детей», «Семь песен для детей на армянские народные тексты», о которых М. Рухкян пишет: «Степень искренности и


5

«ԵՐԱԺԻՇՏ» ԱՄՍԱԹԵՐԹԸ 20 ՏԱՐԵԿԱՆ Է

4 **постижение поэтической правды оригинала делает эти миниатюры творчески значительным делом. Наверное впереди их издание и обязательное распространение среди детей”.**

Не раз Софа Азнаурян обращалась и к детской фортепианной музыке: здесь автором охвачен широкий спектр жанров: танцевальных – “Танец”, “Вальс”; полифонических – 2-х, 3-х, 4-х голосные фуги; жанровых – “Игра”, “Скерцо”, в том числе Этюды и крупная форма – Сонатина в 3-х частях. “Интересное неповторимое художественное качество в ее музыке предстает в облике благородной простоты, которая позволяет автору осуществлять поиск выразительных средств, направленных на обогащение мыслей и чувств любого человека, независимо от его возраста” (проф. ЕГК Лилит Григорян). Одно из последних сочинений также для детей – музыка к драматическому спектаклю–сказке “Наша Маша” (А. Гишян, 2020).

Произведения Софы Азнаурян регулярно исполняются в концертах пленумов и фестивалей СК Армении (член СК Армении с 1998 года). Некоторые из произведений изданы и входят в учебные программы ереванских музыкальных школ, училищ и консерватории. “Творчество Софы Азнау-



Սոֆա Ազնաուրյան, Գոհար Շագոյան, Գոհար Հովհաննիսյան («ԵՊԿ հրատարակչության» դիզայներ, գեղարվեստական խմբագիր, 2012 թվականից առ այսօր), 2019 թ.



Արմինե Արոյան, Գոհար Շագոյան, Անուշ Կիրակոսյան (2018-2022 թթ խմբագիր, «Երաժշտական Հայաստան» ամսագրի պատասխանատու քարտուղար, ժուռնալիստ, քանոնահարուհի, ՀՀ ժուռնալիստների միության անդամ), «ԵՊԿ հրատարակչությունում», Նոր տարի - 2021 թվական

рян, – пишет Маргарита Рухкян, – со всеми его сюжетами и темами как–то неожиданно, но закономерно обогатило современную армянскую музыку”.

Редакторская деятельность Софы Азнаурян началась в 1985 году в Краснодаре в должности корреспондента–редактора музыкальных стереопрограмм краевого радио.

Եվա Կոչիկյանը 2004-2008 թթ. աշխատել է որպես ռուսերեն տեքստերի խմբագիր, երաժշտագետ է, ավարտած Իրինա Տիգրանովայի դասարանը:

Կարճաժամկետ՝ 2008-2009 թթ. աշխատել է որպես ռուսերեն տեքստերի խմբագիր երաժշտագետ է, Ա. Բաբաջանյան երաժշտամանակավարժական քոլեջի դասախոս Հռիփսիմե Մկրտչյանը:

Մարիամ Ասատրյանը 2006-2011 թթ. աշխատել է նուտային տեքստերի խմբագիր և ԵՊԿ-ում՝ ինֆորմատիկայի դասախոս: Իր երաժշտագիտական մասնագիտական գիտելիքներով կայացել է նաև Իտալիայում, որտեղ և գործուղվել է սովորելու, և այժմ էլ բնակվում է այնտեղ: Իր հետաքրքիր ժամանակակից երաժշտագիտական մտածելակերպի հողվածներն ուղարկում է հրատարակչություն տպագրման:

Հրանտ Խաչիկյանը գիտական հետաքրքրական հողվածներով առ այսօր մասնակցում է երաժշտական մասնագիտական մամուլի հրատարակչական աշխատանքներին: Նա արվեստաբանության բնագավառին և երգչական արվեստին վերաբերող ուսումնամեթոդական հողվածներով աշխատել է հրատարակչությունում որպես թարգմանիչ, խմբագիր, ԵՊԿ-ում որպես երգիչ, մեթոդաբան: Այժմ նա բնակվում է Շվեյցարիայում, որտեղ տեղափոխվեց 2012-ից և

«Երաժշտական Հայաստան» գիտական ամսագրի նաև նուտաստեղծ ՀԿՄ-ի «Հայ կոմպոզիտոր» ամսագրի միջազգային խմբագրական խորհուրդների անդամ է, այսինքն շարունակվում են համագործակցությունները: Հրանտ Խաչիկյանը աշխատել է հրատարակչությունում որպես անգլերենի, ֆրանսերենի թարգմանիչ խմբագիր՝ 2005-2011 թվականները, իր ներկայությամբ բարձր արժեհամակարգի հետևող և ունեցող բարեկիրթ գիտնականի աշխատանք ցուցաբերելով պատասխանատվության և ազնվության «զանգն էր դրանցում» օրինակ դառնալով թե՛ հեղինակների և թե՛ աշխատակիցների համար:

Վալենտին Խաչիկի Թովմայան. ծնվել է (17.12.1937-27.12.2017 թթ., ք. Երևան): Նա ավարտել է 1958 թ. Ռոմանոս Մելիքյանի անվ. երաժշտական ուսումնարանի փողային բաժնի շեփոհի դասարանը (ղեկավար Աշոտ Կարապետյան), 1967-ին ԵՊԿ նվագախմբային ֆակուլտետի փողային ամբիոնի շեփոհի դասարանը (ղեկավար՝ Միքայել Խաչատրյան): Նա աշխատել է 1962-1967 թթ. Երևանի «Նաիրի» կինոթատրոնի ջազ նվագախմբում, ապա՝ «Երևան» փողային նվագախմբում՝ որպես շեփոհահար: Մասնակցել է շուրջ 100 համերգի: 1967-1977 թթ. աշխատել է ՀՍՍՀ հեռուստատեսության և ռադիոյի պետական կոմիտեի սինֆոնիկ նվագախմբում՝ որպես շեփոհահար: Նվագախմբի կազմում բազմաթիվ ծայնագրություններ է կատարել և մասնակցել ավելի քան 200 համերգի: 1977-2006 թթ. աշխատել է Հայաստանի հանրային ռադիոյի երաժշտական հաղորդումների գլխավոր խմբագրության երաժշտական մեկնաբան, ավագ խմբագիր: Վ. Թովմայանը հեղինակ է՝ ավելի քան 4000 ռադիոհոբարտների, ինչպես նաև 120 հաղորդումների Մոսկվայի «Օստանկինո» և 250 ռադիոհոբարտների «ՎԷՄ» ռադիոկայաններում: 2000-2017 թթ. աշխատել է «Երաժշտական Հայաստան» գիտատեսական, քննադատական-հրատարակչական երաժշտական ամսագրում՝ որպես պատասխանատու քարտուղար, 2004-2012 թթ. որպես «ԵՊԿ հրատարակչության» բաժնի վարիչ, մինչև 2017-ը՝ խմբագիր, «Երաժիշտ» ամսաթերթի և ուսումնամեթոդական աշխատությունների ժողովածուի խմբագիր:

Վ. Թովմայանը դասավանդել է՝ 1978 -1989 թթ. Երևանի Խ. Աբովյանի անվ. հայկական պետական մանկավարժական ինստիտուտում «Փողային գործիքների կատարողական արվեստի պատմություն» և «Փողային գործիքների կատարողական արվեստի մեթոդիկա», 1992-2017 թթ. ԵՊԿ-ում «Փողային գործիքների կատարողական արվեստի պատմություն» և «Փողային գործիքների կատարողական արվեստի մեթոդիկա»: Նա խմբագրի և երաժշտագիտական գործունեությունը վառ է՝ 2011 թ. Հայաստանի Գիտությունների ազգային ակադեմիայի Արվեստի ինստիտուտում պաշտպանել է «Նվագախմբային փողային գործիքները և դրանց կատարողականությունը Հայաստանում» թեկնածուական ատենախոսությունը և ստացել արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճան: Գիտական բազմաթիվ գրախոսականների հեղինակ է, հանդես է եկել հանրապետական և միջազգային գիտաժողովներում: Հեղինակ է՝ աշխատությունների՝ «Կյանքի ուրվագիծ. Միքայել Խաչատրյան», 2004 թ., «Փողային և հարվածային գործիքներ», 2011 թ., «Փայտյա և պղնձյա փողային գործիքների կատարողական արվեստի պատմություն», 2014 թ., «Փայտյա և պղնձյա փողային գործիքների կատարողական արվեստի մեթոդիկա», 2014 թ.: Նրա գիտական, վերլուծական, քննադատական և հրատարակչական աշխատանքները 1000 հողված է տպագրել «Սովետական Հայաստան», «Սովետական արվեստ», «Երեկոյան Երևան», «Ավանգարդ», «Հայրենիքի ծայն», «Գեղարվեստ», «Ուրբաթ», «Եթերում է Երևանը», «Եթեր», «TV Channel», «Ալիք», «Արարատ», «Երաժիշտ», «Ձրուցակից», «Երաժշտական Հայաստան», “Музыкальная академия” (Մոսկվա), «Գրականութեան և Արուեստներում» և «Շիրակ» (Հալեպ) պարբերականներում և ամսագրերում: 2015 թվականից եղել է Հայաստանի կոմպոզիտորների նաև շուրջ 40 տարի ՀՀ ժուռնալիստների և Թատերական գործիչների միությունների անդամ:

Տարիներ են անցնում և թվում է, թե մեր սիրելիները մեզ հետ միշտ են լինելու, թե ամեն օր աշխատակալը միմյանց տեսնելու, հաճելի ներկայությունը վայելելու ենք: Ու հանգիստ լինելու, որ նրանք մեր առօրյայում են ու մեր կողքին, նույնիսկ թռչակավորվելուց հետո պարոն Հովհաննեսը շարունակում էր մեր աշխատանքներին աջակցել խորհուրդներով, ուղղել, սրբագրել: Այդ սրբագրում էր բառի բուն և լայն փոխաբերական իմաստով: Հարազատ իր արմատներին, լեզվին, ոսկեդեմիկ հայերենին: Տիրապետում էր կատարյալ՝ թե՛ արևելահայերենին, և՛ թե՛ արևմտահայերենին, իսկ գրաբարին վերաբերում էր խոնարհությամբ ու մե-



Հովհաննես Սուրադյան, Գոհար Շագոյան, Աննա Բաբաջանյան, Հրանտ Խաչիկյան Նոր Տարի, 2009 թ.

ծարանքով, որն այնքան գեղեցիկ և հզոր է, որ միայն աղոթել կարելի է: Հարգարժան, իսկ իր համար կային որդիական սիրով լցված հոգևորականներ և մի առիթով նույնիսկ Արք. Նավասարդ սրբազանին ասաց. «Եթե ես որդի ունենայի կուզե՞նայի Դուք լինե՞իք»:




Շառլ Ազնավուրի ծննդյան 90-ամյակին նվիրված ամսագիրը, նկարը նվիրաբերած «ԵՊԿ հրատարակչության» հեղինակ Մարիամ Քոչարյանից, լուսանկարը՝ Նիկոլա Ազնավուրի, պրոֆեսոր Ն.Ս. Պիրումովա. Գ.Շագոյան, Ա.Արոյան, Ս. Ազնաուրյան, Մ. Քոչարյան, 2014 թ.

«Երաժիշտ» ամսաթերթի բարեկամները.

Շովակ Ավագյան. Իգրի-Սուրմալու հայրենակցական միության նախագահության անդամ էր և այդտեղ մտերմացանք համանուն գրքի շնորհանդեսին և դարձանք հոգեհարազատ հայրենակիցներ, այնուհետև նաև հրատարակչության բարեկամը: Նա Կենսաֆիզիկայի ինստիտուտի տնօրենն էր և այդ գծով միջազգային ասոցիացիայի անդամակցած, ով ներկայացնում էր Հայաստանը: Չքնաղ բարեկիրթ



Շովակ Ավագյան, երաժիշտների հուշատախտակը ՀՀ ֆիզիկայի ինստիտուտում, (լուսանկ.՝ Գ. Շ.)



Պրոֆեսոր, մանկավարժական գիտությունների դոկտոր Յուրի Վաղարշակի Յուզբաշյան

անձնավորություն և երաժշտասեր մտավորական, ով իր հողվածներով Առնո Բաբաջանյանի, Արամ Խաչատրյանի, Շառլ Ազնավուրի մասին իր մասնակցությունը բերեց ամսագրին ու ամսաթերթին:

Յուրի Յուզբաշյան. հրատարակչության բարեկամ՝ սկսած 1998 թվականից «Երաժշտական Հայաստան» բարեկամների ակումբի» ժամանակակից, որ 8 հանդիպումներ տեղի ունեցան՝ ամսագիրը գործում էր բանավոր: Եվ պարոն Յուզբաշյանը իր ներկայությամբ մշտական մասնակիցներից մեկն էր, այնուհետև այդ գործընթացը շարունակվեց՝ բերելով իր մասնակցությունը «ԵՊԿ հրատարակչության» կայացման և զարգացման՝ և՛ ամսաթերթի, և՛ ամսագրի: Նա մշտապես մասնակից է եղել և՛ իր խոսքով, և՛ շնորհավորանքներով գոտեպնդել խմբագիրներին իրենց դժվար, սակայն պատվաբեր աշխատանքում:

Գ.Կ.ՇԱՐՈՅԱՆ «Երաժիշտ» ամսաթերթի հիմնադիր, թողարկման պատասխանատու, երաժշտագետ

«Երաժիշտ» ամսաթերթը ստեղծման օրվանից պայսօր

1

Ամսաթերթում լուսաբանվում է Հայաստանի, Արցախի և Սփյուռքի երաժշտական կյանքը: Այստեղ անդրադառնում ենք տարբեր միջոցառումների, համերգների, նոր հրատարակությունների, նորությունների, ինչպես անվանի երաժիշտների, երաժշտական գործիչների ու մանկավարժների, այնպես էլ երաժիշտ-ուսանողների, երաժշտական ու արվեստի դպրոցների աշակերտների ելույթներին, գործունեությանը՝ խրախուսելով նրանց հաջողությունները:

«Երաժիշտ» ամսաթերթում տարբեր տարիների ընթացքում ընդգրկվել են հետևյալ էջերը՝ «Հոգևոր երաժշտություն», «Համերգային կյանք», «Դպրոցի անկյուն», «Ուսանողի ամբիոն», «Բեմարվեստ», «Երախտավորները», «Հոբելյաններ», «Մրցույթներ, փառատոներ», «Հոգևոր էջ» (եկեղեցական տոների մասին մեծ սիրով նյութեր էր տրամադրում բուհերի հոգևոր պատասխանատու Գեղամ սարկավազ Ավետիսյանը), «Հայ կոմպոզիտորներ», «Գիտաժողովներ», «Գրական էջ», «Միջբուհական կապեր», «Միջդիսցիպլինար գիտություններ», «Միջազգային համագործակցություն» ինչպես նաև Հովհաննես Մուրադյանի հեղինակած հոդվածաշարերը՝ «Դրվագներ հայ երաժիշտների կյանքից», «Մեկ երգի ստեղծման պատմություն», «Մեծերի իմաստաստությունները» («Իմաստաստու Շեքսպիրը», «Իմաստաստու Հակոբ Պարոնյանը», «Վահրամ Փափագյանի իմաստուն խոսքերը» և այլն), «Ժամանակակիցները Կոմիտասի մասին», Անահիտ Կիրակոսյանի «XXI դարի ու-



EXPO-2010 - Երևանի պետական համալսարանում (ԵՊՀ), Երևանի պետական կոնսերվատորիայի մասնակցությամբ ԵՊՀ-ի պալիտոնի բացումը տեղի ունեցավ համերգային ծրագրով՝ ուսանողների կատարմամբ և հրատարակչական գործունեության ցուցադրությամբ, 2010-ին ԵՊՀ համալսարանի քաղաքի վարչի Աննա Հովհաննիսյան, Գոհար Շագոյան

Վարվառա Հովհաննիսյանը, Հովհաննես Դարբինյանը, Սահենիկ Մաղաքյանը, Վիկտորյա Փոշոտյանը, Անահիտ Կիրակոսյանը, Լիլիթ Եփրեմյանը, Մարգարիտ Սարգսյանը, Լուսինե Սահակյանը (ով, ի դեպ, ԵՊՀ ռեկտորի պաշտոնակատար Ծովինար Մովսիսյանի հետ միասին ուղղորդում են երաժշտագետ ուսանողներին հոդվածներով ակտիվորեն հանդես գալ ամսաթերթում), Արտյոմ Անդրեասյանը և այլք: Հետաքրքիր հոդվածներով հանդես են եկել ԵՊՀ տարբեր տարիների ուսանողներ՝ երաժշտագետներ, կոմպոզիտորներ և կատարողներ: Լավագույն հոդվածագրերին «Երաժիշտ»

ՀՀ Մշակույթի նախարարության, Հայաստանի գրողների միության, Հրատարակիչների ազգային ասոցիացիայի և «Մեկ ազգ, մեկ մշակույթ» կազմակերպության նախաձեռնությամբ, 2008 թվականի հունիսի 7-ին, Շառլ ազնավուրի անվան հրատարակչական կազմակերպության «Գրքի համահայկական առաջին տոնավաճառ»ը:

Հայաստանում այդ օրը հրատարակչա-



ԵՊՀ հրատարակչության տաղավարը հյուրընկալել է Հրատարակիչների միության նախագահ Վահան Խաչատրյանին (կենտրոնում)



ԵՊՀ հրատարակչության տաղավարը «Երաժիշտ» ամսաթերթի գլխավոր խմբագիր Աննա Գևորգյան տպագրական գործունեությունը հրականացնող շուրջ 100 հրատարակչություններից 37 մասնակիցների թվում էր և «ԵՊՀ հրատարակչությունը»՝ հիմնադիր-տնօրեն և գլխավոր խմբագիր, երաժշտագետ Գոհար Շագոյանի գլխավորությամբ: տես 9(34)2008

տիրինբուրգում, Մոսկվայում (տարվա ընթացքում մի քանի անգամ), Աթենքում, Սալոնիկում, Նյու-Յորքում, Բոստոնում, Լոս-Անջելեսում, Նովոսիբիրսկում և միջազգային գրքի փառատոներում, ինչպես նաև տարեկան EXSPO - ներում կազմակերպված տարբեր երկրներում: Հատկանշական էր «ԵՊՀ հրատարակչության» մասնակցությունը 2012 թվականին «Երևանը միջազգային գրքի մայրաքաղաք հայտարարած և Հայոց գրատպու-

7



Ուխտագնացություն Գուգարաց և Շիրակի շրջաններ, կազմակերպիչ Կարինե Բրուտյան և հյուրեր, Արդվի գյուղում հանդիպեցինք, Աստու կամրջ, երկու սրբազանների՝ թեմի առաջնորդ, ով մեզ օրհնեց՝ երջանկահիշատակ Գուգարաց թեմի առաջնորդ Տ. Սեպուհ արքեպս. Չուլջեանը և Շիրակի թեմի Տ. Միքայել արքեպս. Աջապահեանը, կաթողիկոսի դամբարանից դուրս գալիս մենք պետք է դեռ գնալինք աղոթելու և Պատարագից հատվածներ կատարելու, Արդվի գյուղի VII դ. Սուրբ Հովհաննես եկեղեցու բակում, 2018 թ.



ԵՊՀ հրատարակչությունը միավորված հյուրերի և ԵՊՀ ուսանողության հետ, դասախոս՝ Կարինե Բրուտյանի և Գոհար Շագոյանի ղեկավարությամբ Եղեռնի զոհերի հիշատակի տուրք են տալիս Ցեղասպանության բանգարանում և հոգևոր երգով խմկարկում, Ծիծեռնակաբերդ, 2007թ.

սանողի գիտելիքի զավեշտարան», Տաթև Ամիրյանի «Հիմնախնդիր» («Երաժիշտներին հուզող հիմնախնդիր հարցեր», հրատարակվել է մեկ անգամ և չի շարունակվել), Հովհաննես Դարբինյանի «Կատակում են երաժիշտները», Արմինե Աթոյանի «Մեծերը կանանց մասին», Անուշ Կիրակոսյանի «Ճանաչե՛ք միմյանց», Հասմիկ Համբարյանի «Երիտասարդ երաժշտագետներ» հոդվածաշարերը: Ամսաթերթի նախաձեռնությամբ պարբերաբար հրատարակվում էին ուսանողների հարցադրումները արդի խնդիրների շուրջ, որոնց պատասխանում էին համապատասխան բաժինների պատասխանատուները (տես «Երաժիշտ» ամսաթերթի 2 (87) 2013 համարը): Գրեթե բոլոր համարներում ընդգրկվել են «Նոր հրատարակությունները» և «Երևանյան հայտարարությունները»: Ամսաթերթում լուսաբանվում են նաև ԵՊՀ տարբեր տարիների շրջանավարտների մասին, ովքեր մասնագիտական գործունեություն են ծավալում արտերկրում:

Տարիների ընթացքում ամսաթերթին ակտիվ թղթակցել են երաժշտագետներ, կատարողներ, ԵՊՀ դասախոսներ, պրոֆեսորներ, ուսանողներ, հոդվածագրեր Սփյուռքի, ՀՀ մարզերի մշակութային օջախներից. Արաբսի Սարյանը, Սվետլանա Սարգսյանը, Նարինե Ավետիսյանը, Աստղիկ Հարությունյանը, Տիրան Լօքմազյանը, Հասմիկ Էլոյանը, Մանուկ Մանուկյանը, Հռիփսիմե Մկրտչյանը, Լուիզա Մաթևոսյանը, Նանա Մարգարյանը, Հրանտ Խաչիկյանը,

ամսաթերթը պարբերաբար մրցանակներ է շնորհում. լավագույն քննադատական հոդվածների համար Սոնա Անդրեասյանին և Արսեն Բաբաջանյանին շնորհվել է Գեորգի և Իրինա Տիգրանովների անվ. մրցանակ: 2004 թվականից «ԵՊՀ հրատարակչության հրատարակած ամբողջ գրականությունը մասնակցել է գրքի միջազգային ցուցադրություններին Հրատարակիչների միջազգային ասոցիացիայի՝ համաձայն Վահան Խաչատրյանի, շնորհիվ՝ Ֆրանկֆուրտում (տարվա ընթացքում մի քանի անգամ), Սանկտ-Պետերբուրգում, Եկա-



Սվետլանա Սարգսյան, Ստեփան Բաբաթորոսյան, Աննա Բակուց, Տիգրան Բունիաթյան, հյուր Իրանից՝ Կարմեն Ոսկանյան, Կարինե Բրուտյան, Անահիտ Մուղնեցյան, Արմինե Աթոյան, Գոհար Շագոյան, Կարինե Խալատովա, Բարկեն Սիմոնյան, Ռաֆֆի Միքայելեան, «Երաժիշտ» ամսաթերթի 10-ամյա անցած ուղին ներկայացրեց գլխավոր խմբագիր Արմինե Աթոյանը «ԵՊՀ հրատարակչության շնորհանդեսը Թումանյան 40՝ «Ակունքում» հունվարի 28, 2015 թ.

«Երաժիշտ» ամսաթերթը ստեղծման օրվանից պաշտոնապես

6

թյան 500-ամյակին» նվիրված միջոցառումներին: Հատկապես նշանակալից էր, որ բացման արարողության ժամանակ հրատարակչությանը հատկացված էր 1-ին տաղավարը: Ցուցադրված էր բոլոր համարներով՝ մտավորականների պատկերազարդ կազմերով «Երաժշտական Հայաստան» ամսագիրը: Մեծ հոգածությամբ, ՀՀ մշակույթի նախարարությունը պատշաճ ներկայացրեց ամսագիրը միջազգային պետական պատվիրակությանը:

Այդ մասին և երաժշտական մեկ տարվա կյանքն ամբողջական արտացոլվել է միայն «Երաժիշտ» ամսաթերթում, տարեկան կտրվածքով ամբողջ 2012 թվականին 1-12 համարներում:

Հրատարակվում են նաև ԵՊԿ անդամների, պրոֆեսորների տարեկան հաշվետվությունները, նրանց գործունեության, կատարած աշխատանքի ամբողջական պատկերն արտացոլող հոդվածներ:

2018 թվականի բոլոր համարներում ընդգրկվեցին ԵՊԿ դասախոս Սարգիս Հովհաննիսյանի մանրամասն ցուցումներն ու բացատրությունները Mus Score-նոտային հավաքչական համակարգով աշխատելու վերաբերյալ: Տպագրվում են նաև երաժիշտ ուսանողների հոդվածներ հայտնի նկարիչների ցուցահանդեսների մասին. Չոյա Սարգսյանի

Маргарян с многочисленными отчетами о концертах, памятных вечерах в Ереване и по всей республике.

Из зарубежных авторов можно отметить Рубена Тертеряна (Эквадор), всегда откликавшегося на события в Армении; Маргариту Овсепян (Краснодар, РФ) о концерте, посвященном Комитасу в стенах Кубанского института культуры и др.

В газете были напечатаны блестящие статьи мэтра армянской журналистики, писательницы и поэтессы Нелли Саакян о Бетховене и Арно Бабаджаняне; стихи и переводы Каринэ Халатовой (Дереник Демирчян – “Кинто”, “Еражишт”), режиссера музыкального театра Виктории Пошотян об отечественном оперном искусстве; театроведа Натальи Асмарян о деятельности Оперного театра.

Часто появляются статьи редактора Софьи Азнаурян, в частности о концертах (“Гия Канчели: бездна простых тем”, “Элисо Болквадзе: талант с французским шармом”), к юбилейным датам (“История еврейского народа, записанная нотами”), рецензии на новые издания (“Не петь я не могу” о творчестве Э. Багдасаряна, о книге Нины Акоюян, подаренных библиотеке и издательству ЕГК) и др.

Амսաթերթի «Գրական էջ»-ում տպագրվում են գրողների, գրող-երաժիշտների բանաստեղծություններ, պատմվածքներ և էսսեներ: Նրանցից են՝ Հայկական բանակի պահեստազորի սպա՝ մայրո Սիշա Անտոնյանը, Հայկական բանակի պահեստի սպա՝ մայրո, ԵՊԿ փակնագործ, հետախույզ Լաչին Ստեփանյանը, օպերային երգիչ Արկադի Մարտիրոսյանը, թարգմանիչ, բանաստեղծ և գրող Կարինա Խալատյանը, կոմպոզիտոր, կոմպոզիտոր, ԵՊԿ պրոֆեսոր Միխայել Կոկոսյանը, ԵՊԿ պրոֆեսոր Սարգսիս Սարգսյանը, ԵՊԿ ուսանողներ՝ Չոյա Սարգսյանը, Շիրազ Այարյանը, Անի Գաբրիելյանը, Արմավիրի քաղաքապետարանի երաժշտական դպրոցի շրջանավարտ Հասմիկ Մկրտչյանը: Ինչպես նաև ընդգրկվում են բանասեր-գրողների՝ Լուսինե Թովմազյանի, Արմինե Կարենյանի, Սվետլանա Ավակյանի, Հրաչյա Բալոյանի, Հասմիկ Սարգսյանի հոդվածները երաժիշտների ու երաժշտության մասին:



Իզաբելա Սարգսյան, Արմինե Արթուրյան, Արմինե Պողոսյան (Կ. Սարաջյանի անվան ՄԵԴ-ի տնօրեն, դաշնակահար), Գոհար Շազոյան, Շովիմար Սովակյան (ԵՊԿ հրատարակչությունը) գործում է ԵՊԿ պրոնեկտորի ենթակայությամբ, Անուշ Կիրակոսյան, Նարինե Զարիֆյան (ԵՊԿ ջազ-փոփ ամբիոնի վարիչ, պրոֆեսոր, կոմպոզիտոր), Սոֆա Ազնաուրյան (ԵՊԿ հրատարակչության) շնորհանդեսը ԵՊԿ-100-ամյակին, ԵՊԿ 4-րդ հարկի դահլիճ 8.2.2021 թ.

Հազոյանը: Ամսաթերթը համագործակցում է Ջաջուռի՝ Մինասի, և պարբերաբար՝ Ե. Չարենցի անվան ԳԱԹ-ի, Ա. Խաչատրյանի և Ա. Սպենդիարյանի տուն-թանգարանների հետ՝ հոդվածներով հանդես են գալիս Ա. Խաչատրյանի տուն-թանգարանի աշխատակից Աննա Ասոյանը, Ա. Սպենդիարյանի տուն-թանգարանի տարբեր տարիների աշխատակիցներ՝ Տիգրան Սարգսյանը, Նվարդ Ստեփանյանը, Հասմիկ Համբարյանը, Աստղիկ Հարությունյանը, Ինեսսա Խաչատրյանը:

Թբիլիսցիների միջազգային ակումբի Թբիլիսցի թերթի հետ համագործակցության շնորհիվ, ի դեմս հասարակական կազմակերպության նախագահ, հայտնի ռեժիսոր և մտավորական Էդուարդ Եղիկիսիլովի և թերթի խմբագիր, թատերագետ և «Երաժիշտ» ամսաթերթում բազմաթիվ հոդվածների հեղինակ Նատալյա Ասմարյանի հաստատեցինք նաև ստեղծագործական կապեր ժուռնալիստ Լուսինե Թովմազյանի հետ, որի «Մեծաց շարունակվող գրուցաչար. Զրույցներ, դիմապատկերներ, խոհեր...» գրքի շնորհանդեսը լուսաբանվեց թերթում, և պարբերաբար հրատարակվում ենք հոդվածներ այդ գրքից՝ նվիրված արվեստագետներին:


«ԵՊԿ հրատարակչությունը» և «Երաժիշտ» ամսաթերթը տարիների ընթացքում ձեռք են բերել նվիրյալ բարեկամներ, որոնց հետ նաև ակտիվ համագործակցել են՝ հասարակական գործիչ ու խմբավար, կոմպոզիտոր, անվանի երաժշտագետ Գրիգոր Փիթեճեանը (ԱՄՆ), Էդվարդ Միրզոյանը, Իրինա Տիգրանյանը, Խորեն Պալանյանը, Արաքսի Սարգսյանը, Շուշանիկ Ավոյանը, որոնք ցավոք այլևս մեզ հետ չեն: Հարազատ մարդիկ են նաև՝ Մեղեա Աբրահամյանը, Կարին Զելմանը (Շվեդիա), Էդվին Ալեմշահը (Սիդ-



Սոֆա Ազնաուրյան, Գոհար Հովհաննիսյան, Արմինե Արթուրյան, Գոհար Շազոյան, Համլետ Պողոսյան, Գոհար Հունամյան

նեյ), Մանանա Կարապետյանը (Վրաստան), Միեր Բեգլարյանը (Գերմանիա), Նավասարդ Սրբազանը, Սերգեյ Սարաջյանը, Հրանտ Խաչիկյանը, Ալինա Փահլևանյանը, Մարգարիտ Ռուխկյանը, Սվետլանա Սարգսյանը, Դանիել Երաժիշտը, Դավիթ Ղազարյանը, Տիրան Լոբնազյանը, Ռուբեն Գալիչյանը և այլք:

Նյութը պատրաստեց ԱՐՄԻՆԵ ԱՅԹՅԱՆԸ երաժշտագետ, «Երաժիշտ» ամսաթերթի գլխավոր խմբագիր



Պահպանելով մամուլի բնագավառում եղած ավանդույթները, «Երաժիշտ» ամսաթերթի վերջին էջում տեղ գտած «Երևանյան հայտարարություններ» խորագիրը թերթի հիմնադիր, երաժշտագետ Գոհար Շազոյանի մտահղացմամբ փոխառել ենք 1883-1917թթ.: Երևանում լույս տեսած «Երևանյան հայտարարություններ» թերթիկի անվանումից: Հին Երևանի մամուլը սկզբնավորվել է ցարական Ռուսաստանի տիրապետության տարիներին, որի դերը բնակչության մտավոր և քաղաքական զարգացման գործում շատ խոստումնալից և կարևոր է եղել: 1883թ-ին սկսվում է «Երևանյան հայտարարություններ» թերթիկի հրատարակումը, որը բավական երկար կյանք ունեցավ՝ 1883-1917 թթ., հրատարակիչ-խմբագիրն էր մտավորական Էմին Տեր-Գրիգորյանը: «Երևանյան հայտարարություններ» միայն խորագիրը պահպանելով գետնեցից «Երաժիշտ» ամսաթերթի վերջին էջում դարձնելով այն ավանդույթ (Այս թերթիկի մասին տես 11 (12) նոյեմբեր 2006 թ. համարում, էջ 4):

հոդվածը 1(157)2019 համարում, նաև ԵՊԿ ուսանողական ամենամյա գիտաժողովներում մասնակցողների լավագույն նյութերը: Համավարակի պայմաններում 2020 թվականի ընթացքում ԵՊԿ-ում շատ ակտիվ հեռավար անցկացվել են գիտխորհուրդներ, դասերը և ավարտական քննությունները:

2013 թ. ապրիլից ամսաթերթը դարձավ եռալեզու. Սկսվեցին տպագրվել նաև ռուսերեն ու անգլերեն լեզուներով հոդվածներ. ռուսերեն հոդվածների խմբագիր Սոֆա Ազնաուրյանի խոսքով.

Авторами статей для газеты являются именитые музыканты: композиторы, исполнители, музыковеды, дирижеры, музыкальные критики. Светлана Саркисян, часто со статьями о музыкальной жизни Армении и зарубежных новостях, основанных на личном участии в многочисленных зарубежных конференциях и форумах; Маргарита Рухкян, как всегда держащая руку на пульсе музыкальных событий; Сарине Автандилян об арцахских премьерах опер А. Бабаева (“Арцаваберд”) и А. Тертеряна (“Огненное кольцо”); Саеник Магакян со своей рубрикой “Концертмейстеры Армении”; Маргарита Багдасарян (АГПУ) со статьями о гастролях армянских музыкантов и творческими портретами композиторов-современников; Нина Акоюян (НКР), освещающая музыкальную жизнь Арцаха; Маргарита Саркисян, пишущая о выдающихся педагогах-вокалистах ЕГК; Софья Микаелян, с новинками музыкальной жизни Санкт–Петербурга; Саркис Оганесян с рекомендациями молодым музыкантам по работе с программой “Muse Score”; Нана

գի շրջանավարտ Հասմիկ Մկրտչյանը: Ինչպես նաև ընդգրկվում են բանասեր-գրողների՝ Լուսինե Թովմազյանի, Արմինե Կարենյանի, Սվետլանա Ավակյանի, Հրաչյա Բալոյանի, Հասմիկ Սարգսյանի հոդվածները երաժիշտների ու երաժշտության մասին:

Ընթերցողին է ներկայացվում Երևանի պետական կոնսերվատորիայում տեղի ունեցող տարբեր իրադարձությունների, ուսանողների հաջողությունների, «ԵՊԿ հրատարակչության» կազմակերպած ամենամյա շնորհանդեսների, հանդիպումների, միջոցառումների, ինչպես նաև դեպի Հայաստանի տարբեր եկեղեցիներ ուխտագնացությունների մասին:

Ամսաթերթում ամեն տարի անդրադարձ է կատարվում Հայոց Ցեղասպանության առնչվող թեմաներին, այդ թվում նաև ապրիլի 24-ին «ԵՊԿ հրատարակչության» աշխատակազմի և ԵՊԿ ուսանողների՝ Երևանի ազգային պանթեոն այցելությունների մասին (այդ ավանդույթին սկիզբ է դրվել դեռ 2001 թվականին Գոհար Շազոյանի ջանքերով, «Երաժշտական Հայաստան» ամսագրի խմբագրությունով առաջին անգամ այցելությամբ: Այնուհետև 2007-ից ապրիլի 24-ին, կամ էլ միանում էինք ջախերով երթին՝ 23-ին, Հայ ֆոլկլորագիտության երաժշտության ամբիոնի դասախոս Կարինե Բրուսյանի կազմակերպմամբ հոգևոր երգի և ֆոլկլոր դասընթացների գործնականում հնչեցումը: «Ուխտագնացություն Հոգևոր երգի երթով» ինչպես գրեց հետագայում իր հոդվածներում Գ.

ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄՆԵՐ «ԵՐԱԺԻՇՏ» ԱՄՍԱԹԵՐԹԻ 20-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ



Региональный Общественный Фонд памяти Арно Бабаджаняна

Москва, Газетный пер. дом 13/15, стр. 3 | тел.: +7(925) 507-58-64, +7(916) 758-93-92 | e-mail: arakbc@mail.ru sag30@mail.ru

2025-01-22 ևս. А-005

В редакцию газеты Ереванской консерватории "Еражишт"

С ЮБИЛЕЕМ!

Дорогие друзья музыканты, музыковеды и меломаны!

Руководство Фонда памяти Арно Бабаджаняна поздравляет нас всех с двадцатилетием со дня основания ежемесячной газеты Ереванской государственной консерватории имени Комитаса "Еражишт". Мы уверены, что это важное событие не только для коллектива Ереванской консерватории, но и для более широкой общественности, интересующейся историей и теперешним днем армянской музыки.

Находясь у истоков развития и распространения профессиональной музыки в Армении, имея богатую историю, пополнившая сокровищницу мирового искусства множеством ярких лиц, Ереванская консерватория долгое время нуждалась и сейчас нуждается в своего рода летописи, освещающей примечательные события, констатирующей успехи профессорско-преподавательского состава и особенно студентов. Эту роль на протяжении двадцати лет успешно исполняет ежемесячная газета "Еражишт". А события эти интересны далеко не только консерваторам. Что еще примечательно: содержание различных публикаций газеты выходит за рамки внутриконтсерваторской жизни и охватывает более широкую географию, постоянно обращается к прошлому и настоящему как армянского, так и мирового музыкального искусства, полезность осведомленности о котором не подлежит сомнению.

Мы, руководство Фонда памяти Арно Бабаджаняна, в свою очередь хотим выделить следующие факты. Арно Арутюнович, будучи одним из самых первых студентов класса композиции в Ереванской консерватории, в дальнейшем остался привязанным к своей альма-матер. После завершения учебы и стажировки в Москве он сам выразил желание стать преподавателем в ЕКК и передать свои профессиональные навыки молодым поколениям, о чем ярко свидетельствует его письмо к ректору ЕКК, знаменитому дирижеру, профессору Константину Соломоновичу Сараджеву от 19 августа 1949 г. В дальнейшем, за годы ректорства Лазаря Мартиросовича Сарьяна, он неоднократно был приглашен в качестве члена приемной комиссии. Кроме того, он сотрудничал со студентами и аспирантами ЕКК, которые готовили о нем статьи и исследования. Когда на государственном уровне отмечалось 50-летие консерватории, Бабаджанян выступил с небольшой поздравительной статьей, что не менее примечательно, поскольку он в прессе выступал преимущественно с интервью, а не опосредованно к собственному перу был требователем до неадекватности.

Особое значение для нас имеет тот факт, что ежемесячник "Еражишт", отмечающий в эти дни свое двадцатилетие, с самых первых пор своего существования обращается к творческой жизни Арно Арутюновича и констатирует посвященные его памяти различные мероприятия, как концертные и фестивальные, так и научные и издательские. Число подобных публикаций пресыщает дюжину, что в пределах одного периодического издания является весьма малым числом.

В наше время, когда постоянным и резким изменениям подвергаются общественные мировоззрения, когда число проявляющих интерес к высокой культуре и культурному образованию людей как бы отсеивается (вспоминаются библейские слова: "много званых, да мало избранных"), и все это повлияло на то, что названий периодических изданий (особенно вузовских) становится все меньше, сохранение непрерывности издания ежемесячника "Еражишт" является ярким проявлением непоколебимой преданности родной культуре. Для наших дней примечательно то, что издание это выпускается не только в печатном, но и в цифровом виде, в последнее время появляясь также на страницах социальной сети. Оба эти способа публикации имеют свое несомненное значение: цифровой — с точки зрения своевременного доступа к широкой публике, печатный — с точки зрения следования традициям и более надежного сохранения.

От всего сердца желаем, чтобы эти двадцать лет ежемесячника "Еражишт" стали началом долгой и плодотворной жизни, во благо родной культуры, во имя настоящего и будущего армянского искусства и науки, достойных быть письменно увековеченными (տրամի գրոց յիշատակի).

ԱՐՈ ԲԱԲԱԺՅԱՆԻ ՓՈՆԴ
Պր. Բ. Բաբաջանյան
Президент Фонда памяти Арно Бабаджаняна

Ա. Անդրեասյան
А. Андреевич
Вице-президент Фонда памяти Арно Бабаджаняна по научно-исследовательской работе



Նարինե Զարիֆյան

Շնորհավորում են երաժշտական կյանքը լուսարանող միակ մասնագիտական ամսաթերթի՝ «Երաժիշտ»-ի հիմնադրման 20-ամյակը, որը տարիներ շարունակ ներկայացրել է բոլոր խոշոր իրադարձությունները, որոնք տեղի են ունենում երաժշտական աշխարհում: Ցանկանում են երկարատև, բեղմնավոր աշխատանքային կյանք և հաջողություն:

ՆԱՐԻՆԵ ԶԱՐԻՖՅԱՆ
ՀՀ պրվեստի վարչության գործիչ, Կոմպոզիտոր, ԵՊԿ Զագ-փոփ երաժշտության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր



Արտեմ Անդրեասյան



Ա. ՍՊԵՆԴԻԱՐՅԱՆԻ ՏՈՒՆ-ԹԱՆԳԱՐԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ԿՈՄԻՏԱՍԻ ԱՎԱՄ ԳԵՏԱԿԱՆ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱՅԻ «ԵՐԱԺԻՇՏ» ԳԵՏԱԿԱՆ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻ 20-ԱՄՅԱԿԻ ԵՎ «ԵՐԱԺԻՇՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԿԱՆ ԱՄՍԱԳՐԻ 27-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎԸ

Ջերմորեն շնորհավորում են հայկական երաժշտական մասնագիտական մամուլի հիմնադիր, ԵՊԿ հրատարակչության տնօրեն, գլխավոր խմբագիր, երաժշտագետ Գոհար Ըագոյանին և հրատարակչության անձնակազմին: Երկու տասնամյակից ավել գործող այս հրատարակչությունները դարձել են հայկական երաժշտական կյանքի տարեգրությունը՝ կամրջելով հայ երաժշտական անցյալը և ներկան թե՛ Հայաստանում, թե՛ Սփյուռքում: Բարձր գնահատանքի է արժանի երաժշտական աշխարհում ձեր կատարած գործը, որն իրականացնում եք անխնայ նվիրումով՝ հանրայնացնելով Հայաստանի ակադեմիական երաժշտական կյանքը՝ գիտական և հրապարակախոսական հարթակ տրամադրելով այդ ոլորտի ներկայացուցիչներին և ուսումնասիրողներին:

Ձեր մասնակցությունն Ալեքսանդր Սպենդիարյանի տուն-թանգարանի գործունեության և հայ մեծանուն կոմպոզիտորի կյանքի ու ստեղծագործական ժառանգության հանրահռչակմանն արժանի է երախտագիտության: Լիառոյս են, որ մեր համագործակցությունը կլինի շարունակական և առավել արգասաբեր: Մաղթում են բեղուն ու անխափան գործունեություն, ստեղծագործական նորանոր նվաճումներ:

Հարգանքով՝

Ա. Սպենդիարյանի տուն-թանգարանի

տնօրեն՝ Ս. Օթարյան

11.01.2025 թ.

Բ. Երևան, Նալբանդյան 21 | (010) 580783 | spendiaryanmuseum.am

ԳԻՐՆ ՈՒ ԱՄՍԱԳԻՐԸ՝ ԵՐԱԺՇՈՒԹՅԱՆ ԶԱՎԱԿԻՐ

Երաժշտությունը դարերի պատմություն ունի. այդ պատմությունը պահպանել են թե՛ երգահաններն ու երաժիշտները, թե՛ երաժշտական հաստատությունները, թե՛ երաժշտագիտական հարցերով զբաղվող պարբերականները:

Ժամանակակից երաժշտական պարբերականների շարքում իրենց ուրույն տեղն ունեն «Երաժիշտ» ամսաթերթն ու «Երաժշտական Հայաստան» ամսագիրը, որոնք իրենց գործունեությունը ծավալում են շուրջ քառորդ դար:

«Երաժիշտ» ամսաթերթը Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի պաշտոնական թերթն է. այն լուսարանում է թե՛ Հայաստանում, թե՛ աշխարհում տեղի ունեցող երաժշտական իրադարձությունները և ընդհանրապես մշակութային անցյալը: Ամսաթերթը ուղարկություն է դարձնում ավանդական արժեքների պահպանմանը, որոնք ուսանողության համար ունեն կրթադաստիարակական նշանակություն, իսկ մասնագետների դեպքում ամսաթերթը անցյալի ու ներկայի մշակութային արժեքների հարողակցության կամուրջ է:

«Երաժշտական Հայաստան» եռլեզու ամսագիրը երաժիշտների ու երաժշտագետների համար լավագույն հարթակ է՝ ի ցույց դնելու իրենց ստեղծած արգասիքները՝ ի նպաստ հայ և համաշխարհային մշակույթի:

Մեծ ուրախությամբ նշեն, որ ամսագրի մշտապես պտտվող անվիլը իմ կողքով ևս անտարբեր չի անցել. ես իմ գործով որոշակիորեն նպաստել եմ նրա անխնայ ընթացքին՝ կատարելով խմբագրական ու արբագրական աշխատանքներ: Ի մասնավորի հավելեն, որ պատիվ են ունեցել լինելու Կոմիտասի ծննդյան 150-ամյա հոբելյանին նվիրված համարի պատասխանատու քարտուղարը:

«Երաժշտական Հայաստան» ամսագիրը ի ձեն բռնել է օրինյալ ուղի՝ հավատարիմ մնալով իր հավատո հանգանակին՝ ձեռքը պահելով ժամանակի երաժշտական գարկերակին:

Ուզում են երախտագրի խոսք հղել ամսաթերթի ու ամսագրի հիմնադիր տիկին Գոհար Շագոյանին և հրատարակչության ամբողջ անձնակազմին՝ մաղթելով անսայթաք ընթացք իրենց առաքելության ճանապարհին:

Գնահատանքի խոսքն ամփոփենք Սայթա-Նովայի տողով. «Գիր սիրել, դպաս սիրել, դավթար սիրել...»:



Գրիգոր Հարությունյան

ԳՐԻԳՈՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Խմբագիր, մանկավարժ, երաժշտագետ

«Երաժիշտ»-ին շնորհավորանքներ են ուղարկել նաև անսաթերթի բարեկամներ՝ ԵՊԿ շրջանավարտներ՝ ջութակահար Սամվել Առաքելյանը, կոնյուրդիոր Հասմիկ Հարությունյանը և խմբավար Արմի Սիմոնյանը (Նազարեանը): Նրանք կայացած երաժիշտներ են, ովքեր ակտիվ մասնագիտական գործունեություն են ծավալում արտերկրում: Ապրելով և գործելով Հայաստանից դուրս, իրենց գործունեությանը կարողանում են հավատարիմ մնալ հայկական ազգային երաժշտության ավյուններին, պրոպագանդելով ու փարսածելով հայ կոնյուրդիորների սրբազորություններն արտասահմանում:

ՍԱՄՎԵԼ ԱՌԱՔԵԼՅԱՆ, ՄԱՅԱՄԻ, ԱՄՆ

Անցյալ տարի պատիվ ունեցա լուսաբանվելու «Երաժիշտ» անսաթերթում: Մեծ հաճույք ստացա աշխատելով գլխավոր խմբագիր Արմինե Աթոյանի հետ, որը ցուցաբերեց մեծ պրոֆեսիոնալիզմ իր աշխատանքում: Ես ապրում եմ Ամերիկայի Միացյալ Նահանգներում, սակայն դա խոչընդոտ չհանդիսացավ Արմինե Աթոյանի համար, որպեսզի կարողանա ձգտել ինֆորմացիա հավաքել իմ մասին և խմբագրել: Կարող եմ ասել, որ հրատարակչության աշխատակազմը մեծ ծավալի աշխատանք է կատարում ամեն ամիս լուսաբանելով հայկական արվեստի տարբեր ներկայացուցիչներին և երաժշտական միջոցառումները: Դրա շնորհիվ է, որ արվեստի և մասնավորապես հայկական երաժշտական մշակույթի

նորությունները պատշաճ ներկայացվում են ընթերցողին: Շնորհավորում եմ «Երաժիշտ» անսաթերթի 20-ամյակը և մաղթում մեծ եռանդ հետագա գործունեության ընթացքում:

ՍԱՄՎԵԼ ԱՌԱՔԵԼՅԱՆ
ջութակահար
Միչիգանի համալսարանի շրջանավարտ,
Մայամիի սինֆոնիկ նվագախմբի արտիստ, ԱՄՆ



Սամվել Առաքելյան

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԼՈՍ-ԱՆՋԵԼԵՍ, ԱՄՆ



Հասմիկ Հարությունյան

Սիրելի՛ «Երաժիշտ» անսաթերթի ողջ անձնակազմ, Ջերմորեն շնորհավորում եմ «Երաժիշտ» անսաթերթի 20-ամյակի առթիվ: Այս երկու տասնամյակների ընթացքում դուք ստեղծել եք մի եզակի մշակութային հարթակ, որն իր առանցքային դերակատարությամբ դարձել է հայ երաժշտության ու մշակույթի լուսավոր ճանապարհը: Ինչպես Կոմիտասը նշել է. «Երաժշտությունը ոչ միայն արվեստ է, այլ կյանք է՝ անսահման ընդարձակ, անկուրելի»: Եվ «Երաժիշտ»-ը հենց այդ հոգին է՝ այն ճանապարհը, որը ներկայացնում է մեր ազգային երաժշտությունը: Գոհար Շագոյանի ղեկավարությամբ «Երաժիշտ»-ը դարձել է մեր ժամանակի եզակի թերթերից մեկը՝ ամբողջությամբ նվիրված հայ երաժշտության գիտությանը և արվեստին: Անգնահատելի է թերթի գլխավոր խմբագիր Արմինե Աթոյանի դերը: Նա ոչ միայն հրաշալի լրագրող է, այլև անկրկնելի արվեստագետ: Նրա անձը լրացնում է «Երաժիշտ»-ի յուրաքանչյուր թերթի էջը՝ դարձնելով այն ամենից ավելին՝ ոչ միայն տեղեկատվական, այլ նաև մշակութային թերթ:

Ես վստահ եմ, որ «Երաժիշտ»-ը, իր վեհ նպատակով ու մաքառումներով, շարունակելու է լինել հայ երաժշտության անփոխարինելի հենարանը, որը տարածում է մեր արվեստի լույսը թե՛ Հայաստանում, թե՛ Սփյուռքում: Շնորհավորում եմ ամբողջ թիմին այս հորելյանի առթիվ՝ մաղթելով նորանոր հաջողություններ ու ստեղծագործական նվաճումներ: Թող «Երաժիշտ»-ը շարունակի մնալ մեր մշակույթի հզոր հիմքը՝ շարունակելով մեծ ներդրում ունենալ հայ երաժշտության զարգացման և տարածման գործում:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
կոնյուրդիոր
Լոս-Անջելես, ԱՄՆ

ԱՐՓԻ ՍԻՄՐՈՋԵԱՆ (ՆԱԶԱՐԵԱՆ) ԹԵՀՐԱՆ, ԻՐԱՆ



Էջմին Հաթանյան (Թեհրանի «Արարատ» և «Տավիղ» երգչախմբերի անդամ), Արմինե Աթոյան, Արմի Սիմոնյան (Նազարեան) (Թեհրանի «Արարատ» և «Տավիղ» երգչախմբերի խմբավար), Գոհար Շագոյան, Գոհար Հովհաննիսյան, Անգինե Ռուստոյան (Թեհրանի «Արարատ» երգչախմբի անդամ)

Յարգարժան «ԵՊԿ հրատարակչության» «Երաժիշտ» անսաթերթի խմբագրություն, Շնորհատրում ենք Ձեր 20-ամեակը: «Երաժիշտ» թերթն իր 20-ամեակների ընթացքում անկախ դժարություններից ոչ մի քանք չի խնայել ընթերցողի հետ հաղորդակցության կապ հաստատելու գործում, ոչ միայն Հայրենիքում տեղի ունեցած արևստի բնագաւառում անց ու դարձերից, այլ նաև անդրադարձել է Սփյուռքում տեղի ունեցած մշակութային ձեռնարկներին և իր էջը տրամադրելով միջոցառումներին կապ է ստեղծել ընթերցողի և օտարերկրեայ հայկական բեմերի հետ: «Երաժիշտ» թերթի անձնակազմին մաղթում ենք առողջություն, ոյժ ու կորով և յաջողություն:

Յարգանքներով՝
ԱՐՓԻ ՍԻՄՐՈՋԵԱՆ (ՆԱԶԱՐԵԱՆ),
Հայ Համալսարանականների Ընդհանուր Միության «Տավիղ» և Հայ Մշակութային «Արարատ» Կազմակերպության Արևաբից միության «Արարատ» երգչախմբերի խմբավար, Թեհրան, Իրան

ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔՆԵՐ «ԵՐԱԺԻՇՏ» ԱՄՍԱԹԵՐԹԻ 20-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ



Սվետլանա Նավասարդյան

Մրտանց շնորհավորում են երաժշտության և երաժիշտների մեծ բարեկամ «Երաժիշտ» ամսաթերթի քսանամյակը: Շնորհիվ թերթի, շահագրգիռ մասնակիցն ենք դառնում հարազատ կոնսերվատորիայի անցուդարձին, ճանաչում նրա առօրյան և հաղորդակից լինում երևութային իրադարձություններին: Շնորհիվ թերթի, փոխադրվում ենք այլ երկրներ՝ ճանաչելու համար

երաժշտության միակ կանոնավոր պարբերականը՝ հանրապետությունում, այն էլ արդեն եռալեզու: Թերթն, ըստ էության, դառնում է արդի երաժշտական կյանքի տարեգրողը, մի բան, որ այդչափ կարևոր ու պարտավորեցնող է: Ուրեմն, թող մեր «Երաժիշտ»ը լինի միշտ ավունով լի, թող գրիչը թեթև լինի, խոսքը՝ ծանրակշիռ: Խմբագրական անբողջ կազմին, ոգեշնչող ու ղեկավար, հիմնադիր Գոհար Շագոյանին ամսաթերթում՝ Արմինե Աթոյանի գլխավորությամբ, ստեղծագործական բազում փայլատակունցներ են մաղթում: Մշտապես լինեք շարժման մեջ և դեպի նոր հորիզոններն ուղղված:

Սիրով ձեր՝
Սվետլանա Նավասարդյան

Սիրով ձեր՝
Սվետլանա Նավասարդյան

10 лет – это только первая ступень

В истории Ереванской государственной консерватории им. Комитаса за ее 90-летнюю историю было немало запоминающихся страниц, связанных с творческо-исполнительской деятельностью представителей разных профессий, обогативших музыкальное искусство, музыкальную науку и музыкальное образование. Но есть страница особая. Ее заслуги не столь очевидны, социальное назначение не всегда востребовано, прямое влияние на музыкальную практику отсутствует. Однако без этой страницы ЕГК, как и любой вуз, свой статус теряет. Речь идет о ежемесячной газете «Еражишт» («Музыкант»), основанной 10 лет тому назад на базе «Издательства ЕГК». Вначале тематика газеты была связана талько с жизнью консерватории, но постепенно расширились круг наблюдения и объекты освещения. Отсутствие в стране периодического издания по музыке естественно привело к выходу за пределы вузовских событий, обращению к тому значительному, что происходит в Армении, а иногда – и за ее пределами. Двухязычность газеты – на армянском и русском языках (с 2013) – расширяет читательскую аудиторию, приобщает к нашей музыкальной жизни людей разных национальностей и из разных стран. Примечательно, что в газете находят место статьи как профессионалов, так и только начинающих. Перо студента, его художественные вкусы и мироощущение отдаются благодаря печатной продукции. Этот процесс необходимо наращивать, представляя больше возможностей для формирующихся музыкантов, в частности, музыковедов. Как и любая газета, «Еражишт» имеет свои достоинства и недостатки. Хочется пожелать свободы мыслей, большей критической направленности, освещения проблемных сторон музыкальной жизнедеятельности. Панегирики, одностороннее восхваление нужны только для личного архива музыкантов. А для прогресса, особенно вузовского, нужна объективная и профессионально аргументированная оценка происходящего. Коллектив редакции «Еражишт» настроен на прогресс. Значит, надо всем вместе строить наше будущее.

СВЕТЛАНА КОРЮНОВНА САРКИСЯН
доктор искусствоведения, профессор ЕГК
2015 г.

Մրտանց շնորհավորում են ԵՊԿ հրատարակչության «Երաժիշտ» ամսաթերթի խմբագրությանը և լրագրողական կազմին ամսաթերթի 20-ամյակի առթիվ: Մեր անհասկանալի ժամանակներում, երբ խարխուլվում են բազմաթիվ ավանդական արժեքներ, ինչը հաճախակիորեն անդամալի կորուստների է բերում, «Երաժիշտը» շարունակում է պատվով կատարել իր առաքելությունը: Հարուստ բովանդակությունը, նյութերի բծախնդիր ընտրությունը, հողվածների բարձր տեղեկատվական և մշակութային արժեքը՝ այս ամենով է տարբերվում «Երաժիշտ» ամսաթերթը: Որպես միջազգային մրցույթների դափնեկիր, ներառական «Փարոս» երգչախմբի տնօրեն՝ հատկապես ուզում են նշել, որ ամսաթերթն անդրադարձել է մեր երգչախմբի բոլոր կարևորագույն համերգներին, հյուրախաղերին և այլ իրադարձություններին: Եվ այդ բոլոր հողվածներում շատ հիմնավոր և բազմակողմանի կերպով են նկարագրվել մեր երգչախմբի ստեղծագործական նվաճումները: Դա մեզ համար

շատ թանկ է, քանի որ տպագիր մամուլում անդրադարձը յուրահատուկ և կարևոր տեղ է զբաղեցնում «Փարոսի» արխիվում: Ցանկանում են «Երաժիշտ» ամսաթերթին երկարատևություն և փառանդ ավանդույթների պահպանում՝ ի նպաստ հայ երաժշտական հասարակությանը:

ԱՐՄԵՆ ԱԼԿԵՐԳՅԱՆ
Ջութակահար,
«Ռոնիսոն» հասարակական
կազմակերպության և
«Փարոս» կամերային երգչախմբի տնօրեն



Արմեն Ալակերյան



Ռաֆֆի Միրայեցյան

Երևանի պետական կոնսերվատորիայի սրտում, մի հրաշալի անկյունում, իմ սովորելու առաջին տարիներին ստեղծվեց «Երաժիշտ» ամսաթերթը և դարձավ մեր երաժշտական ճանապարհի ուղեկիցը, նվիրելով գեղեցիկ հուշեր: Ջերմ շնորհավորանքներս «Երաժիշտ» ամսաթերթի 20-ամյակի կապակցությամբ: Մաղթում են, որ հաղթահարի բոլոր դժվարությունները և շարունակի իր ընթացքը հաջողությամբ:

ՈԱՅՏԻ ՄԻՔԱՅԷԼԵՆ
Գիրիժոր
Հայաստան, ԱՄՆ

20-ամյակ «Երաժիշտ» ամսաթերթի

Հանույնով սեղեկացանք, որ Երևանի Պետական Կոնսերվատորիայի հրատարակչությունը հանդիսացող «Երաժիշտ» ամսաթերթն այս օրերի դառնում է 20 օրեկան: Խոստովանեմք, որ մշակութային մեր հանրությունը, ակնկալվածին հակառակ՝ գրեթե զրկված է մշակութային մամուլից, ցանցի փչացածությամբ: Եվ այդ բացառություններից մեկը «Երաժիշտ» ամսաթերթն է, որը հրատարակվում է արդեն 20 օրեր, նվիրյալ երկու հայտնիների՝ թողարկման դասասանաճու, երաժշտագետ Գոհար Շագոյանի ու գլխավոր խմբագիր, երաժշտագետ Արմինե Աթոյանի ջանքերով:

Ամսաթերթի 20-ամյա հորեյանը դաստնադրել կնվազի հունվարի 28-ին, Առնո Բարաջանյանի անվան համերգասրահում կայանալիք շնորհանդեսին: Մինչ այդ ջերմորեն շնորհավորում ենք «Երաժիշտ» ամսաթերթի կամերային երգչախմբին և խմբագրական կազմին եւ հողվածները մաղթում հրատարակչա-



րում ենք «Երաժիշտ» ամսաթերթի կամերային երգչախմբին և խմբագրական կազմին եւ հողվածները մաղթում հրատարակչա-

«Երաժիշտ» ամսաթերթի հիմնադրանա 20-ամյակին նվիրված շնորհանդեսը կկայանա սույն թվականի փետրվարի 6-ին, Ա. Բարաջանյանի համերգասրահի ներքնասրահում:

ՄՆՏՈՆԻՆ ԴՎՈՐԺԱԿԻ «ՌԵՔՎԻԵՄ» ՈՐՊԵՍ ԵՐԵՎԱՆՅԱՆ 16-ՐԴ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓԱՌԱՏՈՆԻ ԵԶՐԱՓՍԿՈՒՄ

2024 թ., սեպտեմբերի 12-ից հոկտեմբերի 30-ը Երևանյան 16-րդ միջազգային երաժշտական փառատոնն էր, որի շրջանակներում տեղի ունեցան բազմաթիվ համերգներ: Համերգների առթիվ հրավիրված էին մի շարք հանրահայտ երաժիշտներ, որոնցից էին օպերային երգիչ Պլապիրո Դոմինիգոն, դիրիժորներ՝ Բնգո Մեցմախերը և Իլյիչ Ռիվալը, դաշնակահարներ՝ Բարի Դուգլասը և Հելմուտ Դոյչը: Համերգներին մասնակից են եղել նաև հայ անվանի երաժիշտներ, որոնցից էին Հրաչուի Բասենցը, դաշնակահար Հայկ Մելիքյանը, սոպրանո Ջուլիանա Գրիգորյանը:

Փառատոնի առաջնությունը չէին կոմպոզիտորների ստեղծագործություններն էին, որոնցից են Բեդրժիխ Սմետանան, Բոհուսլավ Մարտինուն, Լեոշ Յանաչեկը և այլն: Փառատոնի փակման համերգի ժամանակ հենց չէին մեծ կոմպոզիտոր Աստուհի Դվորժակի մեծակտավ «Ռեքվիեմ»:

Աստուհի Դվորժակը Բ. Սմետանայից հետո Չեխիայի երաժշտության ակադեմիական երաժշտության երկրորդ դերն է:

Չեխոսլակիցները նրան ջերմությամբ անվանում էին «Չեխ ժողովրդի արժանի որդի»: Հանդիսանում է ազգային կոմպոզիտորական դպրոցի հիմնադիրներից մեկը, Սմետանայի գործի շարունակողը: Ա. Դվորժակը համարվում է բոլոր ժամանակների ամենահայտնի կոմպոզիտորներից, քանի որ նրա կոմպոզիտորական տաղանդը գնահատվել է հայրենիքի սահմաններից դուրս: Նա համարվում է ոչ միայն դասական ազգային սիմֆոնիայի և կոնցերտի հիմնադիր, այլ նաև օրատորիայի: Լինելով մեծ հավատացյալ՝ նա մեծ ուշադրություն է դարձրել ոչ միայն աշխարհիկ, այլ նաև հոգևոր կանտատ-օրատորիալ ժանրին, որի առաջին նմուշը «Stabat Mater»-ն է, գրված 1877 թ: Կատարվելով միայն 6 տարի անց Լոնդոնում՝ կոմպոզիտորին բերել է եվրոպական ճանաչման: 12 տարի անց ստեղծում է «Մթ. Լյուդմիլա» օրատորիան և մեսսա, և իր մեծագույն հոգևոր գործը՝ «Ռեքվիեմ»:

Ռեքվիեմի առաջին ուրվագծերն ստեղծվել են 1890 թ. հունվարին: Նա գրում էր շատ արագ, գյուղի տանը, որտեղ և ծնվել էին նրա շատ ստեղծագործություններ: Ընդամենը մեկուկես ամսում գրեց 7 համար և դաշնամուրային նվագակցություն է ներդրել: Ցավոք, ստեղծման ընթացքն ընդհատվեց փետրվարի կեսերին և վերսկսվեց միայն 4 ամիս անց: Վերջին 6 մասերը գրվեցին 2 ամսում, գործիքավորումը կատարեց 3 ամսում:

Ավանդական լատինական տեքստով գրված Ռեքվիեմը բաժանված է 2 անհավասար մասի. առաջին մասը՝ 8 համար, երկրորդը՝ 5 համար: Ըստ որում, ֆինալում կրկնվում են Lacrimosa-ի եզրափակիչ խոսքերը: Կոմպոզիտորն օգտագործել է գործածությունից դուրս եկած Gradual-ը:

Հատկանշական է մասերը իրար միավորող խորհրդանշական լայնատիվը, որը հիշեցնում է Բախի կողմից սիրված խաչի երաժշտական էմբլեման:

Կարմիր թելի նման այս լայնատիվն անցնում է ամբողջ «Ռեքվիեմի» ընթացքում, հիշեցնելով մարդկային կյանքի ինստի և մահվան մասին:

Ռեքվիեմը բաղկացած է 2 մասից. Առաջին մաս՝

Introitus: Requiem aeternam. poco Lento
Graduale-Requiem aeternam. Andante
Sequentia-Dies irae. Allegro impetuoso
Tuba mirum. Moderato
Quid sum miser-Lento
Recordare Jesu pie. Andante
Confutatis maledictis. Moderato maestoso
Lacrimosa. L'istesso Tempo
Երկրորդ մաս՝
Offertorium: Domine Jesu Christe. Andante con moto
Hostias. Andante
Sanctus. Andante maestoso
Pie Jesu. Poco adagio
Agnus Dei. Lento

Ստեղծագործության տևողությունը 1 ժամ 35 րոպե է:

Փառատոնի փակման համերգը տեղի ունեցավ 2024 թ. հոկտեմբերի 30-ին, ժամը 19:00-ին, Արամ Խաչատրյանի անվան համերգասրահում: Համերգին մասնակցում էին Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախումբը՝ գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր Էդուարդ Թովչյանի ղեկավարությամբ, Հայաստանի Ազգային Ակադեմիական երգչախումբը (գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր՝ Հովհաննես Չերիջյան) և 4 մենակատարներ՝ սոպրանո Աննա Ազատովան, մեծ-սոպրանո Ալինա Չերտաշը, տենոր Տիգրան Մելքոնյանը և բաս Ժան Մարտինիլը:

Համերգն սկսվեց նախաբանով: Ներկայացվեցին Երևանյան 16-րդ միջազգային երաժշտական փառատոնը, հայտնի արտիստները, Երևանի քաղաքապետարանի կողմից Պլապիրո Դոմինիգոն և Ջուլիանա Գրիգորյանը պարգևատրվեցին ՀՀԿԳՄՄՆ ոսկե մեդալով: Նախաբանում պատմվեց փառատոնի նպատակի և կայացած համերգների մասին: Նախաբանի խոսքը, սակայն, փոքր ինչ երկար էր, որը, թերևս հոգնեցուցիչ էր հայ հանդիսատեսի համար:

Համերգի հենց սկզբից նկատելի էր, որ նվագախումբը և երգչախումբը լիարժեք ձուլված չէին իրար և կարծես լսելի լինեք առանձին նվագախումբը և առանձին երգչախումբը: Շատ հաճախ նկատելի էր, որ նվագախումբը կարծես չէր հասցնում երգչախմբի տեմպերին: Կար նկատելի անհավասարություն նվագախմբի և երգչախմբի միջև, որը երբեմն դժվարացնում էր «Ռեքվիեմի» համարների՝ որպես մեկ ամբողջականություն ընկալումը:

Որպես առանձին խմբեր՝ թե՛ երգչախմբի, թե՛ նվագախմբի կատարումները կարող ենք համարել հաջող, սակայն բեմում նրանք չէին գործում որպես մեկ ամբողջականություն:

Երգչախմբում ձայների ձուլվածությունը բավարար էր, բայց պակասում էր թափանցիկությունը, և նկատելի կոպիտ էին հնչում տենորները: Կանանց կազմի երգեցողությունը հաջող էր, առանց ֆալշերի և բղավոցների: Առաջին մի քանի համարներում երբեմն նվագախումբը հնչողությունում ծածկում էր երգչախմբին, և երգչախմբի երգեցողության մեջ դժվար էր տեսնել ընկալելը:

Նվագախմբի կատարման մեջ առանձին գործիքային կազմերում առավել նկատելի էր լարայինների նվագի ար-

տահայտչականությունը, և կատարման մաքրությունը, փոքրիկ գործիքների մոտ մենանվագ հատվածներում երբեմն նկատելի ֆալշ նոտաներ կային, սակայն ընդհանուր նվագախմբի հնչողությամբ ծածկված նվագը կարելի է գնահատել ավելի քան բավարար: Նվագախումբը բավականին թափանցիկ հնչողությամբ առանձին մենանվագ հատվածներին նվագակցում էր, կարծես մեկնաբանելով այն, ինչ երգում էր մենակատարը: Ստեղծագործության ամբողջ ընթացքում կատարումը թերի էր դարձնում ձուլված չլինելու հանգամանքով, որը շտկելու դեպքում այն ունկնդրելը ավելի հաճելի կլինեք:

Մենակատարների ընտրությունը հաջող էր, առավելապես աչքի էր ընկնում տենոր Տիգրան Մելքոնյանի և բաս Ժան Մարտինիլի երգեցողությունը: Վերջիններս ամբողջությամբ զգում էին իրենց երգաբառիները, նկատելի էր, որ վերապրում են ստեղծագործությունը և երգում են շատ զգացմունքով: Նրանց ձայները շատ գեղեցիկ էին ձուլվում թե՛ երգչախմբի, թե՛ նվագախմբի հետ: Տենոր Տիգրան Մելքոնյանի ձայնը հատկապես գրավիչ էր իր յուրահատուկ մաքրությամբ, սոպրանոյից էր ստեղծվում, որ նա հստակ լսում է յուրաքանչյուր հնչյուն ու ամբողջությամբ զգում է ամեն մի հնչյունը:

Նրա երգեցողությունը կլանող էր, և շատ հաճելի էր նրան լսելը:

Բոլոր կատարողները (թե՛ մենակատարները, թե՛ նվագախումբը, թե՛ երգչախումբը) համերգի ընթացքում պահում էին լեթիտուդ, և նույնիսկ եթե որևէ կատարողի պարտիայում երկար ժամանակ դադար էր, նա ուշադրությամբ հետևում էր մնացած կատարողների երգեցողությանն ու նվագին: Թե՛ երգչախումբը, թե՛ նվագախումբը և թե՛ մենակատարները բավականին զգաստ էին ու հավաքված:

Լսարանը բավականին մեծ էր, որը թերևս պայմանավորված էր այն հանգամանքով, որ համերգը Երևանյան 16-րդ միջազգային փառատոնի փակման կապակցությամբ էր: Ունկնդիրը համերգի ընթացքում մեծամասամբ ուշադիր էր, թեպետ շատերի հայացքներից նկատելի էր, որ չկար լիարժեք պատկերացում ստեղծագործության բնույթի մասին: Հանդիսատեսի մեջ քննադատելի էր այն հանգամանքը, որ շատերն ուշադրություն չէին դարձրել համերգից առաջ հեռախոսները անջատելու խնդրանքին և ամբողջ երեկոյի ընթացքում հաճախ էին հնչում հեռախոսագանգեր, որոնք շեղում էին մնացածներին:

Հանդիսատեսի արձագանքը հետաքրքրական էր, քանզի ամբողջ ընթացքում շատերը «Ռեքվիեմը» լսում էին կարծես դեմքի անհաղորդ արտահայտությամբ (ոչ այնքան ուշադրությամբ), սակայն վերջում բավականին ջերմ ծափոցումներով արձանագծեցին կատարողներին: Ընդհանուր առմամբ հանդիսատեսը ջերմ էր, և համերգի ընթացքում միջավայրը բավականին տրամադրող էր, չնայած որոշ խանգարող հանգամանքների:

Ընդհանուր առմամբ կատարումը կարող ենք համարել բավարար, քանի որ հնարավոր էր պատկերացում կազմել ստեղծագործության ու նրա բնույթի մասին:

ԷԼԵՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ ԵՊԿ Երաժշտագիտության բաժնի 1-ին կուրս Դեկավար՝ արդժևոր Մ. Կոկժան



Նվարդ Մարտինյան

Շնորհավորում են երաժիշտ ամսաթերթի 20ամյակը, մաղթում են, որ այս ազգանվեր գործը դեռ երկար շարունակվի և հաջող սերունդներին ներկայացնի Հայաստանի Հանրապետության և Սփյուռքի անցյալ և ներկա երաժշտամշակութային նվաճումները:

ՆՎԱՐԴ ԱՎԵՏԻՍՅԱՆ Դիրժոր, Ֆրանսիա, Հայաստանի Հանրապետություն

Չանգվածային լրատվության միջոցները (ՉԼՄ) լրատվական տեխնոլոգիաների ամբողջությունն է, որը, զանգվածային հաղորդակցության շնորհիվ, ունի մեծ լարում: Տեխնոլոգիաները, որոնց միջոցով տեղի է ունենում այս հաղորդակցությունը, ներառում են զանազան միջոցներ:

Չեռաձայնային մեդիան, տեղեկատվությունը հաղորդում է էլեկտրոնային եղանակով, այնպիսի միջոցներով, ինչպիսիք են՝ ֆիլմը, ռադիոն, երաժշտությունը կամ հեռուստատեսությունը: Թվային մեդիան ներառում է և համացանցը, և հեռախոսային զանգվածային հաղորդակցությունը: Համացանցային հաղորդակցությունը է այնպիսի ծառայություններ, ինչպիսիք են՝ էլեկտրոնային հասցեն, սոցիալական մեդիայի կայքերը և համացանցի միջոցով գործող ռադիոն և հեռուստատեսությունը: Մի շարք այլ ՉԼՄ հաղորդակցության միջոցներ ցանցում ունեն հավելյալ ներկայություն այնպիսի միջոցներով, ինչպիսիք են՝ օնլայն հեռուստատեսության գովազդները, ՕՐ կողմը, որոնք ուղղորդում են հեռախոսից օգտվողներին դեպի վեբկայք: Այս կերպ, նրանց կարող են օգտվել հեշտ հասանելիությունից և այն բոլոր հնարավորություններից, որոնք առաջարկում է համացանցը: Վերջինիս միջոցով հեշտորեն հեռարձակվում է տեղեկատվությունը աշխարհի տարբեր շրջաններում՝ միաժամանակ և մատչելի: Արտաքին մեդիան տեղեկատվությունը փոխանցում է այնպիսի միջոցներով, ինչպիսիք են՝ հավելյալ գովազդը, ազդապաստանները կամ կրպակները, երկնային գրությունները, որոնք գտնվում են ավտոբուսներից դուրս կամ ներս, առևտրային կառույցներում, վաճառակետերում, սպորտային ստադիոններում, գնացքներում, մեքենաներում: Տպագիր մեդիան տեղեկատվությունը փոխանցում է այնպիսի ֆիզիկական օբյեկտների միջոցով, ինչպիսիք են՝ գրքերը, կոմիքսները, ամսագրերը, թերթերը կամ բրոշյուրները: Իրադարձությունների կազմակերպումը և հանրային ճառը և կարող են համարվել որպես զանգվածային լրատվության ձևեր: Մի շարք կազմակերպություններ, ինչպես օրինակ՝ կինոստուդիաները, հրատարակչությունները, ռադիոն և հեռուստատեսության կայանները, որոնք վերահսկում են այս տեխնոլոգիաները, հայտնի են նաև որպես զանգվածային լրատվամիջոցներ:

XX դարի վերջին, զանգվածային լրատվամիջոցների շրջանակներում առանձնացվում էին ՉԼՄ 8 արդյունաբերություն՝ գրքեր, համացանց, ամսագրեր, ֆիլմեր, թերթեր, ռադիո, ծայնագրություններ և հեռուստատեսություն: Թվային հաղորդակցության տեխնոլոգիաների պայթյունը XX դարավերջին և XXI դարասկզբին էական դարձրեց հետևյալ հարցը. լրատվամիջոցների որ տեսակները պետք է դիտարկել որպես ՉԼՄ: Օրինակ՝ վիճելի հարց է, թե բջջային հեռախոսները, համակարգչային խաղերը (ինչպես օրինակ՝ մասսայական դերային օնլայն խաղերը) և վիդեո խաղերը պետք է ներառել սահմանման մեջ, թե ոչ: 2000 թվականին, 7 ՉԼՄ դասակարգումը դարձավ տարածված: Դրանց ներմուծման հաջողակամությունը հետևյալն է՝

- Տպագրություն (գրքեր, րուկետներ, թերթեր, ամսագրեր և այլն) XV դարի վերջից
- Չայնագրություններ (ձայնակապակցակներ, մագնիսական ժապավեններ, կասետներ, տպագրական ժապավեններ, CD-ներ, DVD-ներ) XIX դարի վերջից
- Կինոթատրոն - մոտ 1900 թվականից
- Ռադիո - մոտ 1910 թվականից
- Չեռուստացույց - մոտ 1950 թվականից
- Համացանց - մոտ 1990 թվականից
- Չեռախոսներ-մոտ 2000 թվականից սկսած

Յուրաքանչյուր լրատվական միջոց ունի իր սեփական բովանդակային ձևերը, ստեղծագործող արտիստները, տեխնիկները և բիզնես մոդելները: Օրինակ՝ Համացանցը ներառում է բլոգներ, վեբ կայքեր և զանազան այլ տեխնոլոգիաներ, որոնք տեղեկատվության տարածման հիմնական ցանցի գազափն են գտնվում: Վեբերորդ և յոթերորդ միջոցները՝ համացանցը և հեռախոսները հաճախ հավաքական կերպով կոչվում են թվային մեդիա, իսկ չորրորդն ու հինգերորդը՝ ռադիոն և հեռուստատեսությունը, դիտվում են որպես հեռարձակող մեդիա: Որոշ հեղինակներ պնդում են, որ վիդեո խաղերը դարձել են մեդիայի առանձնահատուկ ձև:

Չեռախոսը երկկողմանի հաղորդակցական սարք է, մինչդեռ զանգվածային լրատվամիջոցները հաղորդակցվում են մեծ խմբերի հետ: Դեռ ավելին, հեռախոսը վերափոխվել է բջջային հեռախոսի, որն ունի համացանց մուտք գործելու հնարավորություն: Հարց է առաջանում, թե արդյոք դա բջջային հեռախոսը դարձնում է զանգվածային լրատվամիջոց, թե պարզապես սարք, որն ունի մուտքի հնարավորություն դեպի զանգվածային լրատվամիջոց (համացանց):

ԽՍՐԱԳՐԱԿԱՆ

Եթե հետաքրքրեց տեղեկությունը, խնդրում ենք գրեք, մեծը կշարունակենք նյութը:

Մուշեղ Հարությունյան «ԿԵՄԴԱՐՅԱ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ»

1 Ցանկացած հաշվետվության հիմքում ընկած է որոշակի ծավալի կատարված աշխատանք, կամ գործունեություն: Կոնկրետ իմ մասով այդ գործունեությունը կարող ենք բաժանել երեք մասի, որպես երգիչ կատարող, դրան էլ գումարած իմ մանկավարժական և հեղինակային հրատարակչական գործունեությունը: Որպես պրոֆեսիոնալ երգիչ եղել եմ Հանրային շաղիոյի Սայաթ-Նովա աշուղական երգի պետական անսամբլի հիմնադիր և մենակատար, որտեղ աշխատել եմ տասնմեկ տարի, բացի այդ որպես մենակատար երգել եմ «Գանձասար» երգի պարի անսամբլում, «Ազատություն», «Գուսան» և «Միհր» անսամբլներում, հյուրախաղերով հանդես եմ եկել Սիրիայում, Պարսկաստանում, Ֆրանսիայում, Բելգիայում, և խորհրդային միության տարբեր քաղաքներում, իսկ մանկավարժական գործունեությունն սկսել եմ Ջիվանու անվան աշուղական դպրոցից, այնուհետև 2002-ից սկսած մինչ օրս դասավանդում եմ Երևանի Ռոմանոս Մելիքյանի անվան պետական երաժշտական թոլեջում և Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում:

Գուցե փոքր ինչ անհամեստ հնչի, բայց ես հպարտ եմ և ուրախ իմ տեսակի համար, առաջին հերթին որպես հայ մարդ, հետո նոր որպես երաժիշտ, ինչպես նաև իմ ստեղծագործական և հրատարակչական գործունեության համար, որը վերը նշած իմ մարդ և երաժիշտ տեսակների համաձուլվածք է: Ես մեծ մեղք գործած կլինեմ, եթե չասեմ, որ այդ ամենի համար առաջին հերթին պարտական եմ Աստծուն, հետո իմ ծնողներին և մեր ժողովրդին: Կասկածից վեր է, որ բնատուր երաժշտական ունակություններ, կամ երգչական ձայն ունենալը Աստվածային շնորհ է, առավել եվս Աստվածատուր է ստեղծագործելու ունակությունը, որում ես վերստին համոզվեցի 2006 թվականին, երբ իմ ծննդյան 50-ամյակին նվիրված հոբելյանական համերգի ծրագրում ընդգրկված ժողովրդական երգերին փորձեցի բանաստեղծական տեսք տալ, արդյունքը եղավ անսպասելի և իմ աչքի առջև իսկապես հրաշք տեղի ունեցավ, որովհետև անտեսանելի մի ուժ ինձ հուշեց, կամ հասկացրեց, որ այդ ամենն ակքրոստիկոս եզրատողով տեղավորվել է «Հայաստան» բառի մեջ, և հենց այդ կատարված հրաշքն էլ հիմք հանդիսացավ իմ ստեղծագործական և հեղինակային հրատարակչական գործունեության համար, այդ պատճառով էլ իմ հեղինակած առաջին գիրքը անվանեցի «Մի համերգի պատմություն»: Ստորև ներկայացված է այդ ակքրոստիկոս եզրատողը:

- Հ այտնությունդ և սուրբ հավատդ երկնային Աստծով ավետեցի,
 - Ա զնիվ աշխատանքը զավակներիդ հոռովելով զովերգեցի,
 - Յ ան վերջածանցովդ հայ սկրտվեցի,
 - Ա րյանդ կանչին միշտ հավատարիմ մնացի,
 - Ս երունդներիդ արդար պայքարը Հայկյան ոգով խրախուսեցի,
 - Տ արագիր զավակներիդ կռունկի թևով լուր ուղարկեցի,
 - Ա չքս փառավոր անցյալիդ հառած՝
 - Ն ախնիների գցած ճանապարհը հավերժ Մասիս սարը ուղղեցի:
- 2009 թ. լույս տեսավ իմ հեղինակած «Աղոթք» խորագրով



բանաստեղծությունների գիրքը: Ստեղծագործելուց զատ սկսեցի երգարաններ կազմել և հրատարակել: Առաջին երգարանը կրում էր «Ձուներգեր» խորագիրը, այն լույս տեսավ 2014-ին: Երկրորդ երգարանը «Երևան Մոֆիա» խորագրով հայ թուղարական երգարանն էր, որը լույս տեսավ 2018 թ.: Շնորհանդեսը տեղի ունեցավ Բուլղարիայի մայրաքաղաք Սոֆիայում: Երրորդ երգարանը 2022 թ. լույս տեսած «Սայաթ-Նովա 300» խորագրով երգարանն է, որը նվիրված էր մեծ աշուղի ծննդյան 300-ամյակին: Երգարանի շնորհանդեսը տեղի ունեցավ Սայաթ-Նովայի ծննդավայր Թրիլիսիում, «Հայարտանք», անմահ Սայաթ-Նովայի հիշատակին նվիրված և երկար տարիներ ավանդույթ դարձած, ամեն տարի մայիս ամսի վերջին անցկացվող վարդատոնի շրջանակներում:

Հայտնի ճշմարտություն է, ցանկացած անհատ, ես էլ այդ թվում բացառություն չեմ, հասնելով որոշակի պատկառելի տարիքի, անխտիր հետադարձ հայացք է նետում իր անցած ճանապարհին և փորձում է գնահատել իր կյանքի ընթացքում ամբողջ արած չարածը:

2024 թվականը հոբելյաններով առատ տարի էր, և ես այդ իրողությունից օգտվելով, կազմակերպեցի տարբեր մշակութային միջոցառումներ, և փորձեցի իմ երգչական, մանկավարժական, և հրատարակչական ամբողջ գործունեությունն այդ միջոցառումների միջոցով ներկայացնել հայ հասարակությանը: Առաջին միջոցառումը Հայաստանի պետական ֆիլհարմոնիայի «Անտ Բարաջանյան» համերգասրահում փետրվարի 19-ին կայացած համատեղ համերգն էր, Երևանի Ռոմանոս Մելիքյանի անվան պետական երաժշտական թոլեջի, Երևանի Բարսեղ Կանայանի անվան արվեստի և Երևանի Արմեն Տիգրանյանի անվան երաժշտական դպրոցների հետ միասին: Ինչպես գիտեք, այդ օրն այս էլ շուրջ տասնվեց տարի մեզանում նշվում է որպես Ամենայն հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյանի, և գիրք նվիրելու օր: Քանի որ անցյալ տարի լրացավ Հովհաննես Թումանյանի ծննդյան 155-ամյակը, ես օգտվեցի այդ երկու հրաշալի առիթներից և իմ հրատարակած երգարանները և հեղինակային գրքերը նվիրեցի տարբեր երաժշտական հաստատություններին:

2024 թ. լրացավ հայրիկիս ծննդյան 100-ամյակը, և այդ առիթով նախաձեռնեցի համերգ «Կեղևարյա հաշվետվություն» խորագրով, որը կայացավ նոյեմբերի 10-ին Բոհեմ թատրոնում: Այդ համերգի ընթացքում հանդիսատեսին ներկայացրեցի իմ ամբողջ գործունեությունը, որպես երգիչ-կատարող, երգիչ-նվագաձու, մանկավարժ, որպես «Հույսի քարավան» երաժշտական հաղորդաշարի հեղինակ և վարող, ինչպես նաև ամբողջ իմ հրատարակչական գործունեությունը: Որպես հարգանքի տուրք հնչեցին երգեր «Կոմիտասի - 155», «Շարլ Ազնավուրի - 100», «Գուսան Շահենի - 100», «Պարույր Սևակի - 100», և «Հովհաննես Բաղդասարյանի - 100» ծննդյան ամյակներին: 2024 թ. դեկտեմբերին լույս տեսավ իմ կազմած «Հայ ապրեցնող երգեր» խորագրով երգարանը, որը նվիրված էր հայ ֆրանսիական բարեկամությանը, ինչպես նաև Շարլ Ազնավուրի 100 և Կոմիտասի ծննդյան 155-ամյակներին և իմ հեղինակած «Ոչ պատերազմին, սթափվեք մարդիկ» խորագրով գիրքը, ֆրանսերեն թարգմանությամբ: Տարին եզրափակվեց վերը նշած երգարանի և հեղինակային գրքի շնորհանդեսներով, որոնք տեղի ունեցան ֆրանսիայի երկու քաղաքներում,

դեկտեմբերի 13-ին Դեսինում, Ֆրանսահայ Մշակույթի Միության տանը, իսկ դեկտեմբերի 14-ին, Մարսելի Սրբոց Թարգմանչաց հայ առաքելական եկեղեցու, «Ս.Սահակ-Ս.Մեսրոպ» մշակույթի տանը: Ճիշտ է տարին ավարտվեց, բայց ես լիահույս եմ, որ իմ գործունեությունը բոլոր ուղղություններով դեռ շարունակվելու է: Ասվածը մասնավորապես վերաբերվում է «ՀԱՅԱՍՏԱՆ» ակքրոստիկոսին, որը բացահայտվել է Աստծո օգնությամբ, որը ոչ այլ ինչ է, քան իրական հրաշք: Այս երևույթը ես հետևյալ կերպ եմ մեկնաբանում: Քանի որ Աստված հենց ինձ ընտրեց, և իմ միջոցով բացահայտեց «ՀԱՅԱՍՏԱՆ» ակքրոստիկոսը, ուրեմն այստեղ Աստվածային խորհուրդ կա, և այն կարծիքին եմ, որ Աստված սրանով պարտավորեցրել է ինձ, ավելի ճիշտ պատգամել է, որ ես այս հրաշք երևույթը, որպես ուսմունք, տարածեմ ամբողջ աշխարհով մեկ, որտեղ որ հայ կա, և նրանց բոլորին իրազեկեմ հետևյալի մասին, որ նման հրաշք կարող էր իրականանալ միայն մեր Աստվածային այբուբենի և նույնքան Աստվածային տառերի միջոցով, և նրանց բոլորին հիշեցնել անզիլացի գրող Ջորջ Բայրոնի արտահայտած հայտնի մտքը.



Մուշեղ Հարությունյանը ասների հետ, Երևան, Հայաստանի գրողների միության դահլիճ



Մուշեղ Հարությունյանը հյուրերի և Շնորհանդեսի կազմակերպիչ՝ դպիր, երգիչ Արամ Բայրանի հետ, Մարսել

«Ես սովորել եմ հայերի լեզուն, որպեսզի հասկանամ ինչ լեզվով են խոսել ասարվածները, քանզի հայոց լեզուն Ասարվածների լեզու է... Եվ Հայաստանն ասարվածների Հայրենիք է, ասարվածներն էլ ծնունդով Արարարյան Դաշրից են»:

Ջորջ Բայրոն

ՄՈՒՇԵՂ ՀԱՐՈՒՅՈՒՆՅԱՆ
Երգիչ, մանկավարժ, ԵՊԿ դոցենտ

2024 Թ. ՏԱՐԵՎԵՐՉՅԱՆ ԱՄՓՈՓՈՒՄՆԵՐ Գիրաժողովներ, մրցույթներ

ՃՈՒՆԵՄԿՕ-ի գործադիր խորհրդի միաձայն որոշմամբ Կոմիտաս Վարդապետի ստեղծագործությունների հավաքածուն գրանցվել է Աշխարհի հիշողության միջազգային ռեգիստրում: Կոմիտասի թանգարան-ինստիտուտում տեղի է ունեցել «Հազար ու մի երգ» հայկական ժողովրդական երգերի մատենաշարի «Աշխատանքային երգեր» հատորի շնորհանդեսը, գործարկվել է «Կոմիտասի աշխատասենյակը» VR ցուցադրությունը: Կոմիտասի թանգարան-ինստիտուտում հրավիրված մամուլ ասուլիսի ժամանակ այս մասին հայտնել են ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանը, ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալ Վահան Կոս-

տանյանը, Կոմիտասի թանգարան-ինստիտուտի տնօրեն Նիկոլայ Կոստանոյանը, գիտական բաժնի ղեկավար Տաթևիկ Շախկոյանը, «Կոմիտասի աշխատասենյակը» VR նախագծի հեղինակ, թանգարանագետ Մարինե Հարոյանը և «Արդշիրանկ» ՓԲԸ վարչության նախագահ Արտակ Անանյանը:

«Մարդու ճակատագիրը» խորագրով համերգով ամփոփվեց Հայ կոմպոզիտորական արվեստի 15-րդ փառատոնը: Փառատոնի շրջանակում մարտի 14-28-ը ներկայացվեցին XX դարի մեծանուն և ժամանակակից կոմպոզիտորների ստեղծագործությունները: Հայ կոմպոզիտորա-

կան արվեստի փառատոնը կազմակերպել են Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբը և Հայաստանի կոմպոզիտորների միությունը: Այն իրականացվել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության աջակցությամբ: Փառատոնին աջակցում էր Հայկական բարեգործական ընդհանուր միությունը: Հայ կոմպոզիտորական արվեստի փառատոնի նպատակն է հանրահռչակել XX դարի և ժամանակակից հայ դասական երաժշտությունը:

ՃՆԵՐԱՆՈՒՄ, ապրիլի 4-ին մեկնարկել էր Բ. Պենդերեցկու անվ. ժամանակակից երաժշ-

2024 Թ. ՏԱՐԵՎԵՐՋՅԱՆ ԱՄՓՈՓՈՒՄՆԵՐ Շնորհավորանքներ

«AAD.am» կայքի 14-րդ անվանակարգչության ժամանակ ԵՊԿ «Ջազ-փոփ երաժշտության ամբիոն»-ի վարիչ, պրոֆեսոր Նարինե Զարիֆյանը ստացել է «Հայրենիքի մատուցած ծառայությունների համար» և «Նվիրյալ հայրողի» մրցանակները, իսկ ԵՊԿ «Ջազ-փոփ երաժշտության ամբիոն»-ի ղոցենտ Արմանուշ Հակոբյանն արժանացել է «Հայ մշակույթում ներդրած ավանդի համար» և «Նվիրյալ հայրողի» մրցանակներին:

Ջութակահար Արուսյակ Արևշատյանը «Classical stars» միջազգային երաժշտական առցանց մրցույթում (Վարշավա) հաղթել է «Վիրտուոզ պիեթ» և «Ջութակ, պատանի մաստրո» անվանակարգերում:

Կոմպոզիցիայի ֆակուլտետի դասընթացի ուսանող Շուշան Արևշատյանի (ղեկավար՝ Արամ Հովհաննիսյան) «Scherzo»-ն արժանացել է Վարշավայում կազմակերպվող «Classical Musical Stars» միջազգային երաժշտական մրցույթի Կոմպոզիցիա անվանակարգի Արծաթե մրցանակին:

ԵՊԿ 2-րդ կուրսի քանոնահար Լուրա Թորոսյանը, 2023 թ., դեկտեմբերի 15-ին «The North International Music Competition» օնլայն մրցույթի «Քանոն» անվանակարգում, վաստակելով 100-ից 90 միավոր, ստացել է Առաջին մրցանակ:

ԵՊԿ 2-րդ կուրսի քանոնահար Արևիկ Ներկարարյանը, 2023 թ., հոկտեմբերի 13-ին «World Art Games» արվեստի միջազգային մրցույթում օնլայն մրցույթի 20-25 տարեկան տարիքային խմբի «Գործիքային կատարողականություն» անվանակարգում, վաստակելով 100-ից 98 միավոր, համարել է Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի մրցանակակիրների շարքը՝ առաջին տեղի դիպլոմով:

ԵՊԿ 4-րդ կուրսի քանոնահար Մանուշակ Նաղդալյանը, փետրվարի 29-ին «American edition» օնլայն մրցույթի 20-25 տարեկան տարիքային խմբի «Գործիքային կատարողականություն» անվանակարգում, վաստակելով 100-ից 98 միավոր, ստացել է առաջին մրցանակի դիպլոմ:

Մարտի 27-ին, Թատրոնի միջազգային օրը, ԵՊԿ Կոմպոզիցիայի ամբիոնի վարիչ՝ ղոցենտ Վահե Շարաֆյանը Հայաստանի թատերական գործիչների միության «Արտավազդ» մրցանակաբաշխության արժանացել է «Վավազոյն երաժշտության հեղինակ» տիտղոսին:

Միլենա Հարությունյանը, որպես Կոնցերտոմայստերական ամբիոնի մագիստրոսական կրթության 2-րդ կուրսի ուսանող՝ ղոցենտ Զարուհի Ղազարյանի ղեկավարությամբ Ղազարյանի Ալմաթի քաղաքում առցանց անցկացվող «Կոզանի անվան 3-րդ միջազգային մրցույթ»-ի «Կոնցերտոմայստերական վարպետություն» անվանակարգում ստացել է առաջին մրցանակը (31.03-07.04.2024):

Իտալիայի Չերվինյան քաղաքում կայացած Citta di Cervignano ջութակի միջազգային մրցույթում առաջին մրցանակին արժանացել է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի 1-ին կուրսի ջութակահար Շուշաննա Պուչինյանը (Մյուզի Երիցյանի մասնագիտական դասարան, 2023 թվականից դասընթացներ է անցնում ֆրանսիական ջութակահար, միջազգային մրցույթների դափնեկիր Ռոբերտ Ստեփանյանի մոտ):

2-րդ կուրսի քանոնահար Ելենա Թորոսյանը, Հայ ազգային երաժշտության կատարողական արվեստի ամբիոնի պրոֆեսոր Ծովինար Հովհաննիսյանի ղեկավարությամբ նվաճել է «Les etoiles de Paris 2024»-ի («Արվեստների 28-րդ միջազգային մրցույթ և փառատոն» «THE FESTIVAL BRIDGES IN PARIS») Գրան Պրի՝ «Ժողովրդական երաժշտություն, մենակատար, Քանոն» անվանակարգում:

«Հայ ավանդական երաժշտության կատարողական արվեստի ամբիոն»-ի պրոֆեսոր Արգաս Ոսկանյանի մասնագիտական դասարանում սովորող Արա Գյուլբեկյանը ՅՈՒՆԵՍԿՕ-ի կատարողական արվեստների համաշխարհային սոցիալիստիկ Արվեստների միջազգային մրցույթ «ԿՎԻԿՎԻ-2024»-ի «Ժողովրդական երգ» անվանակարգում արժանացել է 1-ին մրցանակին (21.03.2024):

Հայ ավանդական երաժշտության կատարողական արվեստի ամբիոնի դասախոս Արտյոմ Հակոբյանի մասնագիտական դասարանի 2-ր կուրսի ուսանող Ռազմիկ Հարությունյանը արժանացել է «Արտ Մյուզիք» արվեստի միջազգային XV մրցույթ-փառատոնի «Ժողովրդական, աշուղական, հայրենասիրական երգ» անվանակարգի Առաջին կարգի մրցանակին:

Ակադեմիական երգեցողության ամբիոնի պրոֆեսոր Օլգա Գարայանի մասնագիտական դասարանի 3-րդ կուրսի ուսանող Արիս Մինայանը «XXVI Edizione del Concorso Internazionale per cantanti lirici Città di Alcamo» մրցույթում ստացել է երկրորդ պատվավոր մրցանակը (Իտալիա, մայիսի 16-19): Նա արժանացել է նաև «Ente Luglio Musicale Trapanese» միջազգային հատուկ մրցանակին, իսկ որպես եզրափակիչ փուլին հասած ամենաերիտասարդ երգչուհի, ստացել է «Borsa di studio Famiglia La Monica» հատուկ մրցանակը:

Հայ ավանդական երաժշտության կատարողական արվեստի ամբիոնի պրոֆեսոր Մարգարիտ Շահինյանի մասնագիտական դասարանի 4-րդ կուրսի ուսանող Իրինա Շիպակյանը Վրաստանում կայացած «Դեղաշվիդբա» երգի փառատոնին արժանացել է Գրան Պրի մրցանակին՝ ներկայացնելով Սայաթ-Նովայի «Յարեն երված իմ» երգը:

Ակադեմիական երգեցողության ամբիոնի ղոցենտ Զուլեյխա Նազարյանի մասնագիտական դասարանի 2-րդ կուրսի ուսանող Պավել Հարիսյանը «ROYAL MAAS» միջազգային երաժշտական մրցույթի Դասական վոկալ անվանակարգում ստացել է 2-րդ մրցանակը (01.05.2024):

Ջազ-փոփ երաժշտության ամբիոնի պրոֆեսոր Արմանուշ Հակոբյանի մասնագիտական դասարանի 4-րդ կուրսի ուսանող Կառլ Մանուկյանը հաղթել է 2024 թ., հոկտեմբերի 26-29-ը Իսպանիայի Լորե դե Մար քաղաքում անցկացվող «Super Grand Prix» միջազգային մրցույթում: Նա մրցույթին ներկայացել է երկու անվանակարգում՝ «Վոկալ կատարողական արվեստ» և «Կոմպոզիցիա»: Որպես մեներգիչ կատարել է Նարինե Զարիֆյանի «Ար կա» ստեղծագործությունը և դարձել 1-ին կարգի դափնեկիր: «Անձանոթ իմ սեր» ստեղծագործությամբ հեղինակը Կառլ Մանուկյանը արժանացել է նախագծի գլխավոր մրցանակին:

ԵՊԿ Գյուրիի մասնաձյուղի 3-րդ կուրսի ուսանողուհի Լյուդմիլա Հովսեփյանը (դասախոս Լուսինե Դուկասյան) Մոսկվայում կայացած միջազգային մրցույթում արժանացել է Գրան Պրի:

ԵՊԿ Գյուրիի մասնաձյուղի Հայ ավանդական երաժշտության կատարողական արվեստի բաժնի դասախոս Մարինե Ասատրյանին՝ Բուլղարիայում կայացած միջազգային մրցույթի ժյուրիի կազմում արդյունավետ աշխատանքի, իրեն կատարող Մեծ Մրցանակի արժանանալու առթիվ: Շնորհավորում ենք Մարինե Ասատրյանի մասնագիտական դասարանի ուսանողներ Խորեն Հովհաննիսյանին, Մանե Պապիկյանին, Լիլիթ Գևորգյանին, Հռոբիսիմե Ավագյանին, Վանեսա Բարայանին՝ նույն մրցույթում բարձր մրցանակների արժանանալու առթիվ:

ԵՊԿ Գյուրիի մասնաձյուղի ուսանող Նախյուն Մուրադյանը (դասախոս Աննա Եղոյան), Փարիզում կայացած միջազգային մրցույթում Առաջին մրցանակի է ար-

ժանացել:

ԵՊԿ Գյուրիի մասնաձյուղի ուսանողուհի Հեղինե Խաչատրյանին և ղոցենտ Մարինե Խաչատրյանին, 2023 թ., ԵՊԿ նախաձեռնությամբ և ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ «Արամ Խաչատրյան 120» նախագծի մաս կազմող ձայնակալմաշակում ընդգրկվելու առթիվ:

ԵՊԿ Գյուրիի մասնաձյուղի 3-րդ կուրսի ուսանողուհի Լյուդմիլա Հովսեփյանը (ուսումնական ասիստենտներ՝ Հռիփսիմե Պետրոսյան և Ազատ Հարությունյան, ղոցենտ՝ Անահիտ Մանվելյան) Հունգարիայում կայացած միջազգային մրցույթում արժանացել է 1-ին մրցանակի:

ԵՊԿ Գյուրիի մասնաձյուղի 4-րդ կուրսի ուսանողուհի Անահիդա Զարարյանին (պրոֆեսոր Արմեն Հարությունյան) Apple Hill (Նեյտն, ԱՄՆ) Կաներային երաժշտության կենտրոնում անցկացվող մրցույթ-փառատոնի ընտրական փուլում հաղթելու և այդ հեղինակավոր փառատոնում Հայաստանը ներկայացնելու առթիվ:

ԵՊԿ Գյուրիի մասնաձյուղի ուսանողուհի Լյուդմիլա Հովսեփյանը, (ուսումնական ասիստենտ Հեղինե Մարտիրոսյան և դասախոս ղոցենտ Անահիտ Մանվելյան) Մոսկվայում կայացած միջազգային մրցույթում արժանացել է Առաջին մրցանակի:

Պրոֆեսորի գիտական կոչման է արժանացել քանոնահարուհի, ԵՊԿ Գյուրիի մասնաձյուղի Հայ ավանդական երաժշտության կատարողական արվեստի բաժնի դասախոս Անահիտ Վալեսյանը:

Ղոցենտի գիտական կոչման է արժանացել դուդուկահար, ԵՊԿ պետական կոնսերվատորիայի Գյուրիի մասնաձյուղի Հայ ավանդական երաժշտության կատարողական արվեստի բաժնի վարիչ Կարապետ Շարսյանը:

ԵՊԿ Գյուրիի մասնաձյուղի ուսանող Վահրամ Բասենցյանը (ուսումնական ասիստենտ Հռիփսիմե Պետրոսյան, դասախոս Մարգարիտա Դուկասյան) Փարիզում կայացած միջազգային մրցույթում արժանացել է 2-րդ մրցանակի, իսկ նախապատրաստական բաժնի ուսանողուհի Մերի Գրիգորյանը (դասախոս՝ Վարդուհի Վարդանյան) Լյուքսեմբուրգում կայացած մրցույթում Մեծ մրցանակի:

ԵՊԿ Գյուրիի մասնաձյուղի դասախոս Արարսյա Նիկողոսյանը՝ Լյուքսեմբուրգում կայացած միջազգային մրցույթում ստացել է Մեծ մրցանակ:

ԵՊԿ Գյուրիի մասնաձյուղի 3-րդ կուրսի ուսանող Ռաֆիկ Խաչատրյանը (դասախոս՝ ղոցենտ Լուսինե Կոչոյան)՝ Լեհաստանի Չեխոյինեկ քաղաքում կայացած «Vistula Sounds» 3-րդ միջազգային վոկալ փառատոն-մրցույթում, որպես ջազային երգիչ արժանացել է Մեծ մրցանակի: Նա սկզբում հաղթել է իր տարիքային խմբի մրցույթում և ապա՝ բոլոր տարիքային խմբերի հաղողների մեջ ճանաչվել է լավագույնը:

Ռ. Խաչատրյանը ստացել է երկու մրցանակ. 17-21 տարեկան տարիքային խմբի անվանակարգում 1-ին մրցանակ և մրցույթ-փառատոնի Գրան Պրի: Նրա կատարումը հնչել է Գալա համերգին: Մրցույթ-փառատոնի եզրափակիչ երեկոյին երգել է նաև մրցանակակիր ղեկավարը, հրավիրված երգչուհի՝ Լուսինե Կոչոյանը:

ԵՊԿ Գյուրիի մասնաձյուղի 1-ին կուրսի ուսանողուհի Թանարա Ոսկանյանը (դասախոս՝ Նազան Դազարյան, կոնցերտոմայստեր՝ Հասմիկ Զարարյան)՝ Ստոկհոլմում կայացած միջազգային մրցույթում Առաջին մրցանակի է արժանացել:

Պատրաստեց՝ ԱՐՄԻՆԵ ԱԹՈՅԱՆԸ

ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՐՈՒԹՅՈՒՆ ԻՐԱՎԱՆՈՒՄՆԵՐ ԵՐԵՎԱՆԻ ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱՅԻ ՊԵՏԱԿԱՆ ՈՋ ԱՆՎՈՐՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
Վկայական N 0310559505 արված 7.04.2003թ.
ՀԻՄՆԱԳԻՐՆԵՐ՝ Կոմիտասի անվ. ԵՊԿ ՊՈՒԿ
ՍԵՐԳԵՅ ՍԱՐԳՍՅԱՆ, ԳՈՂՎՐ ՇԱԳՈՅԱՆ
Գլխավոր խմբագիր՝ ԱՐՄԻՆԵ ԱԹՈՅԱՆ
Թողարկման պատասխանատու՝ ԳՈՂՎՐ ՇԱԳՈՅԱՆ
Խմբագիրներ՝ ԳՈՂՎՐ ՇԱԳՈՅԱՆ (հայ. լեզու)
ՍՈՖԻ ԱՋՆԱՆՈՒԹՅԱՆ (ռուս. լեզու)
Գեղարվեստական խմբագիր՝ ԳՈՂՎՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Արտատպումը միայն «Երաժիշտ» ամսաթերթի գրավոր արտոնությամբ: Խմբագրությունը միշտ չէ, որ համաձայն է հեղինակների կարծիքներին կամ տեսակետներին: Երբեք չեն գրախոսվում և չեն վերադարձվում:
Շավրիկ 14 էջ: Ստորագրված է 25.01.2025:
Գինը 200 դրամ: Տպարանակը՝ 101:

ԳՈՎԱԳՂԻ տեղադրման համար դիմել խմբագրություն նշված հասցեով.
0001, ք. Երևան, Մարի Գրիգորյան 2
+374 10 52 39 93-118
+ 374 55 00 21 62
http://www.conservatory.am, http://yksclibrary.am/
E-mail: yerazhisht@gmail.com
https://www.facebook.com/Yerazhisht-newspaper-
Yerevan-State-Conservatory-996490150508214/

